



**ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԿԱՄԱՎՈՐ**

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

VOLUNTARY MOTOR INSURANCE RULES

Confirmed by

The Board of EFES ICJSC
Protocol 1 as of 08/08/2023

Valid since

08/08/2023

Code` 04.01.01

Version` 1.0

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ VOLUNTARY MOTOR INSURANCE RULES

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ավտոտրանսպորտային միջոցների կամավոր ապահովագրության սույն կանոնները (այսուհետ նաև՝ Կանոններ) սահմանում են ցամաքային տրանսպորտային միջոցների (այսուհետ նաև՝ ՏՄ) ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի կնքման, կատարման և դադարեցման ընդհանուր պայմանները և կարգը:

1.2. Ավտոտրանսպորտային միջոցների կամավոր ապահովագրության սույն կանոնների և ՀՀ օրենսդրության հիման վրա «ԷՖԵՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ (այսուհետ նաև՝ Ապահովագրող) կնքում է ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության պայմանագրեր ինչպես գործունակ ֆիզիկական անձանց, այնպես էլ ցանկացած կազմակերպարավական ձևի իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող հիմնարկների հետ (այսուհետ նաև՝ Ապահովադիր):

1.3. Կանոնները մշակված են ՀՀ օրենսդրությանը համապատասխան և հանդիսանում են Կանոնների հիման վրա կնքված ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության վկայագրի/պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հավելյալ և անբաժանելի մասը և պարտադիր են Ապահովագրողի, Ապահովադիր (այսուհետ միասին՝ Կողմեր), ինչպես նաև Շահառուի համար:

1.4. Կանոնների հիման վրա Ապահովագրողը իրականացնում է ապահովագրություն ոչ կյանքի ապահովագրության հետևյալ դասերով.

- Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն (բացառությամբ երկաթուղային),
- Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն:

1.5. Ավտոտրանսպորտային միջոցների

CHAPTER 1. GENERAL PROVISIONS

1.1. The following Rules of Voluntary Motor Insurance (hereinafter referred to as the Rules) define the general terms and conditions for conclusion, execution and termination of land motor vehicle (hereinafter referred to as MV) insurance contracts/certificates.

1.2. Based on the rules of Voluntary Motor Insurance and RA legislation “EFES” Insurance Closed Joint-Stock Company (hereinafter referred to as the Insurer) signs motor insurance contracts with working-age individuals, as well as with legal entities of any organizational form, sole proprietors and any institution that does not have the status of a legal entity (hereinafter referred to as the Insured).

1.3. The Rules are developed in accordance with RA legislation. They are considered to be complementary and indivisible part of vehicle insurance certificate / contract (hereinafter referred to as the Contract) and are mandatory for the Insurer and the Insured (hereinafter referred to as the Parties), as well as for the Beneficiary.

1.4. Under the Rules the Insurer provides insurance with the following classes of non-life insurance:

- Land vehicles insurance (other than railway),
- Liability insurance arising from the use of land vehicles (also during transportation of cargo),
- Insurance of personal accidents.

1.5. At the time of vehicle insurance certificate /

ապահովագրության վկայագրի/պայմանագրի կնքման ժամանակ և/կամ դրա գործողության ընթացքում Կողմերը կարող են գրավոր ձևով պայմանավորվել Կանոնների առանձին դրույթների փոփոխության (չկիրառման) և/կամ Կանոններով չնախատեսված լրացուցիչ դրույթների կիրառման մասին:

1.6. Կանոնների և վերջինիս հիման վրա կնքված Պայմանագրի միջև տարընթերցումների դեպքում գերակայությունը տրվում է Պայմանագրին:

1.7. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրված անձին ծանոթացնել Կանոնների և Պայմանագրի պայմաններին և բովանդակությանը, ինչպես նաև դրանցով նախատեսված պարտականությունների անվերապահ կատարման մասին: Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից և Ապահովագրված անձից պահանջելու կատարել Կանոններով և Պայմանագրով սահմանված պարտականությունները: Ապահովագրված անձն Ապահովադրի հետ հավասարապես կրում է Կանոններով և/կամ Պայմանագրով նախատեսված իրենց պարտականությունների չկատարման կամ թերի կատարման համար պատասխանատվությունը, այդ թվում՝ այդ պարտականությունների չկատարման առնչությամբ ապահովագրական հատուցումների հետ կապված բացասական հետևանքների պատասխանատվությունը:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կանոններում օգտագործվող տերմինները և հասկացությունները կիրառվում են դրանց՝ Կանոններով տրված սահմանումներին համապատասխան: Կանոններով չսահմանված տերմինները կիրառելի են դրանց ուղղակի լեզվական նշանակությամբ, եթե դրանց նշանակությունը օրենսդրական կամ ենթօրենսդրական իրավական ակտերով պարզաբանված չէ:

2.2. **Ապահովագրող**՝ «ԷՖԵՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:

2.3. **Ապահովադիր**՝ Ապահովագրողի հետ Պայմանագիր կնքած անձ:

2.4. **Ապահովագրված անձ**՝ ավտոտրանսպորտային միջոցում գտնվող անձ (վարորդ և/կամ ուղևոր), որի հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է ապահովագրության

contract conclusion and / or in its active period, the Parties in writing may agree to change (not apply) certain clauses of the Rules and / or apply any additional clauses not included in the Rules.

1.6. In the event of any conflict between the Rules and the Contract, the Contract shall the prevailing version.

1.7. The Insurer is obliged to inform the Insured about the terms and the content of the Rules and the Contract, as well as about the fulfilment of their obligations. The Insurer has the right to require the Insured and the Insured to perform the obligations set forth in the Rules and the Contract. The Insured equally shares the responsibility for failure to perform or incomplete performance of their obligations under the Rules and / or the Contract along with the Insured.

CHAPTER 2. CONCEPTS USED IN THE RULES

2.1. The terms and concepts used in the Rules apply according to their definitions in the Rules. Terms not defined by the Rules are expected to be interpreted with their linguistic meaning only if their meaning is not clarified by legal or sub-legal acts.

2.2. **Insurer:** “EFES” INSURANCE CLOSED JOINT STOCK COMPANY.

2.3. **Insured:** The person signing the contract with the Insurer.

2.4. **Insured person:** A person (driver and / or passenger) in a motor vehicle whose accident is the subject of an insurance contract (under Section C of the Rules).

պայմանագրի առարկա (Կանոնների Բաժին Գ-ի մասով):

2.5. **Շահառու՝** ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցումը ստանալու իրավունք ունեցող անձ:

2.6. **Ապահովագրության պայմանագիր** (այսուհետ՝ Պայմանագիր կամ Վկայագիր)՝ Ապահովադրի և Ապահովագրողի միջև գրավոր համաձայնություն, որի հիման վրա Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված որոշակի գումարի (ապահովագրավճարի) դիմաց Կանոններով նախատեսված և Պայմանագրով նշված որոշակի ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադրին (Շահառուին) վճարել ապահովագրական հատուցում, բայց ոչ ավել, քան Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը:

2.7. **Ապահովագրական ռիսկ՝** առաջանալու որոշակի հավանականությամբ և պատահականությամբ օժտված ենթադրելի իրադարձություն, որի տեղի ունենալու դեպքի համար կնքվում է ապահովագրության պայմանագիրը:

2.8. **Ապահովագրական պատահար՝** Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած, Պայմանագրով և Կանոններով նախատեսված որևէ դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին կամ Շահառուին վճարել ապահովագրական հատուցում:

2.9. **Ապահովագրական գումար՝** Պայմանագրում սահմանված դրամական գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում վճարել ապահովագրական հատուցում:

2.10. **Ապահովագրական հատուցում՝** ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի կողմից Պայմանագրի և Կանոնների հիման վրա, Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի սահմաններում Շահառուին կամ Ապահովադրին վճարման ենթակա գումար:

2.11. **Ապահովագրավճար՝** Պայմանագրով սահմանված չափով, պայմաններով և ժամկետներում Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր

2.5. **Beneficiary.** A person entitled to receive an insurance compensation prescribed by the Contract in the event of an insurance accident.

2.6. **Insurance Contract.** (hereinafter the Contract or the Certificate) A written agreement between the Insurer and the Insured on the basis of which the Insurer is obliged to pay the Insured (Beneficiary) a compensation in the event of an insurance accident specified in the Contract, which cannot be more than the sum insured of the Contract.

2.7. **Insurance Risk.** A potential event that has a certain probability and chance of occurrence, for which the Contract is signed.

2.8. **Insurance accident.** Any event occurring during the life of the Contract, as stated in the Contract and the Rules, by the occurrence of which the Insurer undertakes the responsibility to pay the Insured or the Beneficiary an insurance indemnity.

2.9. **Sum Insured.** The amount of money specified in the Contract, within which the Insurer is obliged to pay insurance compensation in case of an insurance accident.

2.10. **Insurance compensation.** The amount payable to the Beneficiary or the Insured by the Insurer under the Contract and the Rules, within the amount of the sum insured defined in the Contract, in case of an insurance accident.

2.11. **Insurance premium.** Amount to be paid by the Insured to the Insurer for possible insurance indemnity in accordance with the terms, conditions and dates specified

ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար:

2.12. **Ապահովագրական սակագին՝** ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ:

2.13. **Չհատուցվող գումար՝** Ապահովադրի մասնակցության չափը ապահովագրական պատահարի արդյունքում պատճառված վնասի հատուցմանը, որը սահմանվում է Պայմանագրով կոնկրետ գումարի կամ ապահովագրական գումարի կամ այլ մեծության նկատմամբ տոկոսի տեսքով:

2.13.1. **Ոչ պայմանական չհատուցվող գումար՝** Ապահովագրողը Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց (ապահովագրական հատուցումը նվազեցվում է չհատուցվող գումարի չափով):

2.13.2. **Պայմանական չհատուցվող գումար՝** Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտականությունից, եթե ապահովագրական պատահարի արդյունքում պատճառված վնասի չափը չի գերազանցում կամ հավասար է Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափին և պարտավոր է վճարել վճարման ենթակա ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, եթե վճարման ենթակա ապահովագրական հատուցման գումարը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:

2.14. **Ապահովագրության տարածք՝** տարածք, որի վրա տարածվում է Պայմանագրի գործողությունը և ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտականությունը:

2.15. **Լիազորված վարորդ՝** ֆիզիկական անձ, ով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ապահովագրության պայմանագրով իրավունք ունի վարելու ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցը:

2.16. Լիազորված վարորդը Պայմանագրի կնքման պահին պետք է ունենա նվազագույնը 3 տարվա վարորդական փորձ, և նրա տարիքը պետք է գերազանցի 23 տարին, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

2.17. ՏՄ-ի տիրապետելու ընթացքում լիազորված վարորդն իրականացնում է Կանոններում նշված

in the Contract.

2.12. **Insurance rate:** the ratio of insurance premium over the sum insured.

2.13. **Deductible amount:** The extent of the Insured's participation in the damage compensation caused by the insurance accident, which is defined in the Contract in the form of a fixed amount or a rate on the sum insured or on other specified amount.

2.13.1. **Non-conditional deductible amount:** The Insurer is exempted from paying the insurance indemnity in the amount of the deductible defined in the Contract (the insurance compensation is reduced by the deductible amount).

2.13.2. **Conditional deductible amount:** The Insurer will not pay the insurance indemnity if the amount of the damage caused by the insurance accident does not exceed or is equal to the deductible amount and is obliged to pay the full insurance indemnity, if the amount of the indemnity exceeds the conditional deductible.

2.14. **Insurance Area:** Geographic area, where the Contract is valid and the Insurer bears the obligation to pay insurance compensation in the event of insurance accident.

2.15. **Authorized Driver:** A natural person who has the right to drive the insured vehicle in accordance with the RA legislation and the Contract.

2.16. The Authorized Driver must have a minimum of 3 years of driving experience and be over 23 years old at the time of signing the Contract unless otherwise is stated in the Contract.

2.17. During the use of the vehicle, the Authorized Driver shall perform all the duties of the Insured specified

Ապահովադրի այն պարտականությունները, որոնք կապված են SU-ի տնօրինման, շահագործման, պահպանման հետ:

2.18. Լիազորված վարորդի կողմից Ապահովադրի պարտականությունների չկատարումը կունենա նույն հետևանքները, որոնք կառաջանային, եթե այդ պարտականությունները չկատարվեին Ապահովադրի կողմից:

2.19. Եթե Պայմանագրում որպես Լիազորված վարորդ նշվել է կոնկրետ անձ (անձինք) կամ անձանց որոշակի խումբ, ապա նրանից (նրանցից) բացի որևէ այլ անձ, այդ թվում նաև՝ Պայմանագրում որպես Լիազորված վարորդ չնշված Ապահովադիրը, չի կարող հանդիսանալ Լիազորված վարորդ: «Մեքենայի Շտապօգնություն» դիսկի «Սթափ Վարորդ» ենթադիսկի շրջանակներում Ապահովագրողի կողմից վարորդի տրամադրման դեպքում տվյալ վարորդը լրելյալն համարվում է «Լիազորված վարորդ»:

2.20. Եթե Պայմանագրում Լիազորված վարորդներ նշված չեն, ապա Պայմանագիրը համարվում է կնքված «անսահմանափակ» սկզբունքով և այդ դեպքում SU-ն կարող է վարել ցանկացած անձ, ով կբավարարի Կանոնների 2.15 և 2.16 կետերով նախատեսված Լիազորված վարորդ հասկացության պահանջներին:

2.21. Ապահովադիրը պարտավոր է Լիազորված վարորդին ծանոթացնել կնքված Պայմանագրի բովանդակությանը և տեղեկացնել Պայմանագրով նախատեսված պարտականությունների անվերապահ կատարման մասին:

2.22. Եթե Պայմանագրում ընդգրկվել է 23 տարեկանից փոքր տարիքով և/կամ 1-3 տարի վարորդական փորձ ունեցող Լիազորված վարորդ, որն ապահովագրական պատահարի պահին վարել է SU-ն, ապա Կանոնների 3.17 կետով նախատեսված դիսկի դեպքում կիրառվում է Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի կրկնապատիկը, իսկ չհատուցվող գումար սահմանված չլինելու կամ 0 լինելու դեպքում կիրառվում է ապահովագրական գումարի 2%-ի չափով (նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ) ոչ պայմանական չհատուցվող գումար:

2.23. Եթե Պայմանագրում ընդգրկվել է մինչև 1 տարի վարորդական փորձ ունեցող Լիազորված վարորդ, որը ապահովագրական պատահարի պահին վարել է SU-ն, ապա Կանոնների 3.17 կետով նախատեսված դիսկի դեպքում կիրառվում է Պայմանագրով սահմանված

in the Rules relating to the management, operation and maintenance of the vehicle.

2.18. Failure to perform the duties of the Insured by the Authorized Driver will have the same consequences as if those duties were not properly performed by the Insured.

2.19. If a specific person or a group of people are designated as Authorized Drivers in the Contract, then any person other than them, including the Insured, who is not specified as an Authorized Driver in the Contract, shall not be considered an Authorized Driver. Under the scope of Sober driver sub risk of Car Ambulance risk, the driver provided by the Insurer is considered an Authorized Driver by default.

2.20. If the Authorized Drivers are not specified in the Contract, then the Contract has "unlimited" principle and any person who meets the requirements of the Authorized Driver definition in 2.15 and 2.16 Clauses of the Rules can be an Authorized Driver.

2.21. The Insured is obliged to inform the Authorized Drivers about the terms and the content of the Rules and the Contract, as well as about the fulfilment of thy obligations.

2.22. If the Contract includes an Authorized Driver who is younger than 23 and / or has 1-3 years of driving experience and who has been driving the vehicle at the time of the accident, double of the deductible amount specified in the Contract will be applied. In case of not having a deductible amount or the deductible amount being 0, a non-conditional deductible amount of 2% of the sum insured (minimum AMD 100,000) will be applied.

2.23. If the Contract includes an Authorized Driver with less than 1 year driving experience that was driving the vehicle at the time of the accident, threefold of the deductible amount specified in the Contract will be applied. In case of not having a deductible amount or the

չհատուցվող գումարի եռապատիկը, իսկ չհատուցվող գումար սահմանված չլինելու կամ 0 լինելու դեպքում կիրառվում է ապահովագրական գումարի 3%-ի չափով (նվազագույնը՝ 200,000 ՀՀ դրամ) չհատուցվող գումար:

2.24. Առանձին դեպքերում կարող են սահմանվել Լիազորված վարորդների նկատմամբ այլ սահմանափակումներ, ինչի մասին նշում է կատարվում ապահովագրության պայմանագրում:

2.25. **Տրանսպորտային միջոցներ (SU)**՝ ճանապարհներով մարդկանց, բեռները կամ դրանց ամրակցված սարքավորումները փոխադրելու, ինչպես նաև ոչ տրանսպորտային աշխատանքներ կատարելու համար նախատեսված մեքենաներ, որոնք գործարկվում են շարժիչով, որոնց աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր.սմ-ը, կամ որոնց առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժ-ը:

2.26. Տրանսպորտային միջոցների ներքո հասկացվում են նաև հետևյալները. ավտոմեքենաներ՝ մարդատար, բեռնատար, բեռնամարդատար, ավտոբուսներ և այլ մարդատար մեքենաներ, կցասայլեր և կիսակցասայլեր, մոտոցիկլետներ, մոտորանիվներ, մոտորասայլակներ, կողմերի համաձայնությամբ այլ ինքնագնաց սարքեր, այդ թվում՝ գյուղատնտեսական և քարշակային տեխնիկա, օժանդակ և գյուղատնտեսական այլ մեխանիզմներ:

2.27. Ապահովագրման ենթակա չեն այն SU-ները, որոնք Հայաստանի Հանրապետության տարածք են ներկրվել գործող մաքսային օրենսդրությամբ նախատեսված պահանջների խախտմամբ կամ գրանցված են ՀՀ պետական կառավարման մարմինների կամ Ինտերպոլի տեղեկատվական տվյալների բազայում՝ որպես նախկինում գողացված:

2.28. 2.27 կետում նշված դրույթի խախտմամբ կնքված ապահովագրության պայմանագրերով Ապահովագրողը չի կրում ոչ մի պարտավորություն, այդ թվում՝ ապահովագրական հատուցման տրամադրման, և այդ դեպքում պայմանագիրը համարվում է անվավեր, և ապահովագրավճարը ենթակա չէ ետ վերադարձման:

2.29. **Տուժած անձինք**՝ անձինք, ովքեր ապահովագրական պատահարի հետևանքով իրենց կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված, ինչպես նաև կերակրողի կորստի, հուղարկավորության ծախսերի հետ կապված վնասի հատուցման իրավունք

deductible amount being 0, a deductible amount of 3% of the sum insured (minimum AMD 200,000) will be applied.

2.24. In distinct cases other limitations may be imposed on Authorized Drivers that will be indicated in the Contract.

2.25. **Transportation Vehicles** are motor vehicles for the transportation of people, their belongings or their attachments by means of roads, which are operated by an engine exceeding 50cm³ or have a maximum speed exceeding 50km/h.

2.26. The following shall also be understood as means of transport: cars, buses, trucks, lorries, trailers and semi-trailers, motorcycles, other self-propelled equipment, including agricultural and tractor equipment, auxiliary and other agricultural machinery upon mutual agreement.

2.27. Units that were imported to the Republic of Armenia in violation of the requirements of the current customs legislation or are registered in the databases of the RA public administration or the Interpol as previously stolen could not be the subject of insurance.

2.28. For the insurance contracts concluded in breach of the Clause 2.27 provisions, the Insurer bears no responsibility, including the provision of insurance indemnity, in which case the contract is considered invalid and the insurance premium is non-refundable.

2.29. **Affected people.** People who are entitled to compensation for loss of life, health or property, as well as loss of their provider and funeral expenses as a result of insurance accident in accordance with RA legislation.

ունեն՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

2.30. **Ճանապարհատրանսպորտային պատահար՝** պատահար, որը ծագում է ընդհանուր օգտագործման ճանապարհներով ՏՄ-ի շահագործման ընթացքում և/կամ դրա մասնակցությամբ, որի արդյունքում վնաս է հասցվում մարդկանց կյանքին, առողջությանը, ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց գույքին, ապահովագրված ՏՄ-ին կամ այլ ՏՄ-ին:

**ԳԼՈՒԽ 3. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ
(«ԱՎՏՈՎԱՍԿՈ») – «ԲԱԺԻՆ Ա»**

**Ապահովագրության պայմանագրի առարկան և
կնքման կարգը**

3.1. Սույն Կանոններում «Ավտոկասկո» ապահովագրության պայմանագրի ներքո հասկացվում է Կողմերի միջև համաձայնությունը, ըստ որի՝ Ապահովագրողը պայմանագրով սահմանված վճարի դիմաց (ապահովագրավճար) պայմանագրում նախատեսված պատահարների տեղի ունենալու դեպքում պարտավորվում է Ապահովադրին, իսկ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ Շահառուին պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի սահմաններում հատուցել ապահովագրական պատահարի արդյունքում ապահովագրված գույքին (ապահովագրված ՏՄ-ին և/կամ լրացուցիչ սարքավորումներին) պատճառված իրական վնասը:

3.2. Սույն Կանոններում իրական վնասի ներքո հասկացվում են ՏՄ-ի և/կամ լրացուցիչ սարքավորումների (այսուհետ՝ ԼԱ) վնասվածքը կամ կորուստը, ինչպես նաև Կանոններում նշված այն ծախսերը, որոնք կատարել է Ապահովադիրը, և որոնք կապված են ՏՄ-ի և/կամ ԼԱ-ի կորստի կամ վնասվածքի հետ:

3.3. Ապահովադիրը կարող է կնքել Պայմանագիր ինչպես իր, այնպես էլ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի (այսուհետ՝ Շահառու) օգտին, ով օրենքի, այլ իրավական ակտի կամ պայմանագրի հիման վրա ապահովագրված ՏՄ-ի պահպանման շահ ունի:

3.4. Ապահովագրական պատահարի դեպքում գրավառու հանդիսացող Շահառուին ապահովագրական հատուցումը կարող է վճարվել ապահովագրական հատուցման վճարման վերաբերյալ որոշման կայացման օրվա դրությամբ գրավով ապահովված պարտավորության գումարի

2.30. **Traffic accident:** An accident that occurs during the operation and / or participation of a motor vehicle in a way that damages people's lives, health, natural and / or legal persons' property as well as the insured or other vehicle.

**CHAPTER 3. VOLUNTARY MOTOR VEHICLE
INSURANCE (AUTO CASCO)
SECTION A**

The subject of the Contract and the signing protocol

The Rules under the Auto Casco Insurance Contract shall mean the agreement between the Parties that the Insurer, in the exchange for the agreed payment, shall be liable within the limits of sum insured to compensate for the actual damages done to the insured object (insured vehicle and/or the additional equipment) either to the Insured or to the Beneficiary in case of an insurance accident.

Under the Rules, actual damage shall mean the loss or damage to the vehicle and/or the additional equipment (hereinafter referred to as AE), as well as the expenses incurred by the Insured related to the loss or damage of the vehicle and/or the AE.

The Insured may sign the Contract for the benefit of both themselves and other natural or legal person (hereinafter referred to as the Beneficiary), if under the law, other legal act or contract they have the interest of preservation of the insured vehicle.

In the case of an insurance accident, when the Beneficiary is the pledger, they may be compensated within the amount of the residual liability at the date of the insurance compensation decision, and the remainder shall be paid to the Insured or to other Beneficiary unless otherwise is stated in the Contract.

սահմաններում, իսկ հատուցման ենթակա գումարի մնացած մասը վճարվում է Ապահովադիրին կամ այլ Շահառուին, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

3.5. Ապահովադիրն իրավունք ունի Պայմանագրի գործողության ընթացքում Պայմանագրում նշված Շահառուին փոխարինել այլ անձով, ինչի մասին Ապահովադիրը պետք է գրավոր ծանուցի Ապահովագրողին:

3.6. Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով այն դեպքում, եթե նա իրականացրել է Պայմանագրով սահմանված որևէ պարտականություն կամ Ապահովագրողին ներկայացրել է ապահովագրական հատուցում ստանալու պահանջ:

3.7. Շահառուի կամ Լիազորված վարորդի (Ապահովագրվածանձի) կողմից ապահովագրության պայմանագրի պայմանների խախտումը կհամարվի ապահովագրության պայմանագրի պայմանների խախտում Ապահովադիրի կողմից:

3.8. Ըստ սույն Կանոնների՝ Ապահովագրության տարածք են համարվում Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության տարածքները, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով: Եթե Պայմանագրով ապահովագրության տարածք է սահմանվում Ամբողջ Աշխարհը, ապա ՀՀ և Վրաստանի տարածքից դուրս պայմանագիրը գործում է համախառն 30 օր ժամկետով:

3.9. Եթե Վրաստանի տարածքը ի սկզբանե ներառված չէ Պայմանագրում, ապա այն ներառվում է Ապահովագրության տարածքում Կողմերի միջև Ապահովագրության տարածքի ընդլայնման վերաբերյալ համապատասխան համաձայնագրի կնքման ամսաթվից և գործում է մինչև Պայմանագրի ավարտի ամսաթիվը:

3.10. 3.9 կետով սահմանված համաձայնագրին կարող է փոխարինել Ապահովադիրի և Ապահովագրողի միջև ձեռք բերված բանավոր համաձայնությունը, որն Ապահովագրողի կողմից արձանագրվել է ձայնագրվող հեռախոսազանգով:

3.11. 3.9 կետով սահմանված համաձայնագրի բացակայության դեպքում Վրաստանի Հանրապետության տարածքում տեղի ունեցած պատահարները չեն հանդիսանա ապահովագրական պատահար և դրանց հետ կապված վնասները չեն

The Insured has the right to replace the Beneficiary mentioned in the Contract with another person during the term of the Contract. To do so they have to notify the Insurer in written form.

The Beneficiary cannot be replaced by another person if they have fulfilled any of the contractual obligations or have submitted a claim for insurance compensation to the Insurer.

Violation of the terms of the Contract by the Beneficiary or Authorized Driver (Insured) shall be considered a violation of the terms of the Contract by the Insured.

According to the Rules, the insurance area is the Republic of Armenia and the Republic of Georgia, unless otherwise is stated in the Contract. If by the Contract insurance area is set to be the whole world, then outside the Republic of Armenia and the Republic of Georgia the Contract is valid cumulatively 30 days.

If the Republic of Georgia is not initially included in the Contract, it shall be added to the insurance area from the date of conclusion of the relevant Agreement on the extension of the insurance area and shall be valid till the end of the Contract term.

The verbal agreement between the Insurer and the Insured during a call recorded by the Insurer, may replace the Agreement mentioned in 0 Clause.

In the absence of the Agreement mentioned in 0 Clause, accidents occurring in the territory of the Republic of Georgia shall not be considered an insurance accident and the Insurer will not compensate the damages thereof.

հատուցվի Ապահովագրողի կողմից:

Ապահովագրության օբյեկտ

3.12. Համաձայն Կանոնների «Բաժին Ա»-ի (Ավտոկասկո ապահովագրություն)՝ Պայմանագրով ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովագրի կամ Շահառուի գույքային շահերը կապված SU-ի (ներառյալ SU-ին ամրակցված ԼՍ-ն) տիրապետման և/կամ օգտագործման ընթացքում առաջացած իրական վնասի հետ:

3.13. SU-ն, որն ունի վնասվածք և/կամ մաշվածություն, ապահովագրվում է միայն այն պայմանով, որ նման վնասվածքը և/կամ մաշվածությունը կվերականգնվի Ապահովագրի կողմից իր իսկ հաշվին (ապակե կամ պլաստիկ բաղադրամասերի ցանկացած վնասվածք ենթադրում է դրանց պարտադիր փոխարինում այլ բաղադրամասերով), իսկ SU-ն կենթարկվի լրացուցիչ զննման (թերությունների վերացումից հետո): Ինչպես Պայմանագրի կնքման պահին առկա վնասները, այնպես էլ Լրացուցիչ զննումը արձանագրվում է Ջննման Ակտով, որը ստորագրվում է Ապահովագրողի և Ապահովագրի կողմից, և հավաստում է Պայմանագրի կնքման պահին վնասված հատվածների առկայությունը և հետագայում դրանց վերանորոգված լինելու փաստը: Ջննման Ակտի բացակայության դեպքում վնասված հատվածների վերանորոգված լինելը Ապահովագրողի կողմից չի ընդունվում, և գործում է Կանոնների 3.14 կետը:

3.14. 3.13 կետում նշված գործողությունների չիրականացման դեպքում նման բաղադրամասերի վնասվածքների հետ կապված հայտերը չեն ուսումնասիրվի, իսկ լրիվ ոչնչացման, հափշտակման կամ Առևանգման դեպքում ապահովագրական հատուցման տրամադրման ժամանակ վնասվածքների և/կամ մաշվածության գումարը կհանվի հատուցման գումարից՝ Ապահովագրողի հաշվարկների համաձայն:

3.15. Որպես SU-ին ամրակցված ԼՍ՝ ապահովագրության ենթակա են այն սարքավորումներն ու պարագաները, որոնք չեն կազմում SU-ի արտադրող գործարանի կողմից նախատեսված լրակազմի մասը կամ SU-ի և/կամ ԼՍ-ի զննումից հետո կողմերի համաձայնությամբ համարվում են լրացուցիչ սարքավորումներ:

Ապահովագրական ռիսկեր

3.16. Ապահովագրողն իրականացնում է

Insurance object

Under Section A (Auto Casco Insurance) of the Rules, the insurance object of the Contract shall be considered the property interests of the Insured or the Beneficiary regarding the actual damages done to the vehicle (including AE) during its possession and/or use.

A vehicle that has damages and/or worn out parts, can be insured conditional upon the repairment and recovery of the latter by the Insured at their own expense (any damage to the glass or plastic components implies their mandatory replacement with other components), afterwards the vehicle shall undergo additional inspection. Both the damages at the time of conclusion of the Contract and the additional inspection are documented in the Inspection Report, which is signed by the Insurer and the Insured, and certifies the presence of damaged areas at the time of conclusion of the Contract and the fact of their repairment in the future. The absence of an Inspection Report implies that the Insurer would not accept the repairment of damaged parts and O Clause of the Rules shall be applied.

In the event of failure to perform the actions described in O Clause, claims related to the damages of these parts will not be reviewed, and in the case of complete destruction, theft or abduction, the amount of the damages and/or worn out parts will be deducted from the amount of compensation according to the calculations of the Insurer.

AE to be considered insurance object should be an equipment and/or accessory that is not attached to the vehicle by its manufacturing factory and / or by the agreement of the Parties is treated as AE after the examination.

Insurance Risks

The Insurer carries out motor vehicle insurance against

ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությունը Կանոնների 3.17-3.24 կետերում նշված ռիսկերից, ընդ որում ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել ներքոնշյալ բոլոր ռիսկերից կամ դրանցից մի քանիսի համակցությամբ:

3.17. «ՃՏՊ» (ճանապարհատրանսպորտային պատահար) - պատահար, որը ծագում է ապահովագրված ՏՄ-ի ճանապարհային երթևեկության ընթացքում և մասնակցությամբ (վրաերթ, շրջում, բախում և այլն)՝ ներառյալ այլ մեխանիկական տրանսպորտային միջոցի կողմից կանգառի վիճակում գտնվող ապահովագրված ՏՄ-ին հասցված վնասը, կամ ապահովագրված ՏՄ-ի ինքնավթարը՝ առանց վարորդի մասնակցության:

3.18. «Հրդեհ» - անվերահսկելի այրում կամ պայթյուն, որը ծագել է արտաքին ազդեցության արդյունքում¹: «Հրդեհի» ներքո հասկացվում է նաև անվերահսկելի հրդեհումը կամ պայթյունը, որը ծագել է ՏՄ-ի ինքնայրման հետևանքով: Ցանկացած պարագայում հատուցման ենթակա չի ՏՄ-ում ոչ գործարանային պայմաններում տեղադրված գազի բալոնի պայթյունից կամ գազի արտահոսքից առաջացած հրդեհից պատճառված վնասները, այդ թվում ՃՏՊ հետևանքով առաջացած հրդեհից կամ պայթյունից վնասները:

3.19. «Վնասվածք (ընդ որում թռչող կամ վայր ընկնող առարկայի հետևանքով)» - ՏՄ-ի վրա այլ առարկայի արտաքին ազդեցությունը (այդ թվում՝ ավտոտրանսպորտային միջոցների անիվների տակից մանրախճի, քարերի կամ այլ կոշտ գոյացությունների արտանետումը, քամու հետևանքով ծառերի, ճյուղերի, տանիքների և այլ իրերի անկումը)² բացառությամբ գունափայլային շերտի կետային վնասվածքների՝ առանց ՏՄ-ի դետալների վնասման (կոտրման):

3.20. «Տարերային աղետ» - բնության տարերքների արտաքին ազդեցությունը ՏՄ-ի վրա՝ կայծակ, երկրաշարժ, բուք, փոթորիկ, ջրհեղեղ, մրրկասյուն, կարկուտ, բացառությամբ երկրաշարժի:

3.21. «Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ» - երրորդ անձանց կողմից ՏՄ-ի նկատմամբ անօրինական գործողությունների

the risks specified in 0-0 Clauses, where the Contract may be concluded with all or some of the risks listed.

“Traffic accident”: An accident that occurs during and with the participation of the insured vehicle in the traffic (overturn, collision, etc.) including damages done by other vehicles to the insured vehicle at its standstill or the insured vehicle’s self-crash without the driver’s participation.

“Fire”: An uncontrolled burning or explosion caused by external influence². "Fire" also includes the uncontrolled fire or explosion caused by the self-burning of the vehicle. In any case, damages caused by a gas cylinder blast or a gas leak of a non-factory setting shall not be compensated, including fires or explosions caused by traffic accidents.

“Damage” (including from flying or falling objects): The external impact of another object (including the removal of gravel, stones or other solid objects flying from under the wheels of other vehicles, the fall of trees, branches, roofs and other items due to wind) on the vehicle except for spot damages to the car color coat only without any other damage to the vehicle.

“Natural disaster”: The external impact of natural elements on the vehicle: lightning, storm, flood, hail, excluding earthquake.

“Third Party Illegal Acts”: Unlawful acts or attempts of unlawful acts from third parties, including vandalism. Theft of vehicle main tires, mirrors and headlights only,

¹ Տաքացած դետալների հետ արտաքին առարկայի ներգործության արդյունքում առաջացած անվերահսկելի այրումը կամ պայթյունը չեն համարվում ապահովագրական պատահար, եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի համաձայնությամբ:

² Uncontrolled combustion or explosion caused by exposure of vehicle’s heated component to an external object shall not be considered an insurance accident unless otherwise is provided by the agreement of the Parties.

իրականացում կամ իրականացման փորձ, այդ թվում՝ վանդալիզմ: Միայն SU հիմնական անվադողերի, հայելիների, լուսարձակների գողությունը առանց ամբողջական SU գողության համարվում է «Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ»: Սույն կետով տրամադրվում է հատուցում Պայմանագրի գործողության ընթացքում ոչ ավել քան երկու անգամ:

3.22. «Կենդանիների գործողություններ» - SU-ին վնասվածքի պատճառում կենդանիների գործողությունների հետևանքով, բացառությամբ մեքենայի սրահին և բացառապես մեքենայի ներսից հասանելի մասերին պատճառված վնասները:

3.23. «Երկրաշարժ» - երկրաշարժի արտաքին ազդեցությունը SU-ի վրա:

3.24. «Առևանգում» - SU ամբողջական կամ մասնակի կորուստ գողության, կողոպուտի, ավազակության հետևանքով (բացառությամբ 3.21 կետով նշված մասերի): Կողմերի լրացուցիչ համաձայնությամբ Առևանգում ռիսկի ներքո կարելի է հասկանալ (ներառել) նաև SU-ի հափշտակությունը խարդախության միջոցով:

3.25. «Վնաս» - այն ռիսկերի համակցությունը, որոնք թվարկված են սույն Կանոնների 3.17-3.22 ենթակետերում:

3.26. «Ավտոկասկո» - այն ռիսկերի համակցությունը, որոնք թվարկված են սույն Կանոնների 3.17-3.24 ենթակետերում:

3.27. ԼՍ-ն կարող է ապահովագրվել վերոնշյալ ռիսկերից միայն նրանցով, որոնք կիրառվում են նաև այն SU-ի նկատմամբ, որին ԼՍ-ն ամրակցված է:

3.28. Պայմանագրով կարող է նախատեսվել «Մեքենայի Շտապօգնություն» ծածկույթը - SU շահագործման հետևանքով դրա առանձին ազդեցատների, համակարգերի, հանգույցների և սարքերի անկանխատեսելի խափանում, որը թույլ չի տալիս SU-ին մեկնարկել կամ շարունակել ինքնուրույն ընթացքը՝ անկախ արտադրող/գործարանի կողմից տրամադրված երաշխիքի ժամկետից և առկայությունից, մասնավորապես.

- 1) Անվադողերի վնաս,
- 2) Մարտկոցի խափանում (այդ թվում՝ սնուցման հետևանքով),
- 3) SU վառելիքի պակաս,
- 4) SU-ի այլ խափանում, որը թույլ չի տալիս SU-ին

without the theft of the vehicle itself, is considered Third Party Illegal Act. This clause provides compensation not more than twice during the term of the Contract.

“Actions of Animals”: Damage to the vehicle caused by animals’ actions except for the damages to the car interior and parts accessible only from the inside of the vehicle.

“Earthquake”: The external impact of earthquake on the vehicle.

“Carjacking”: Complete or partial loss of vehicle due to theft, robbery or larceny (except for the parts mentioned in 3.21 Clause). With the additional agreement of the Parties, the theft of the vehicle by means of fraud can also be included in the Carjacking risk.

“Damage”: The combination of risks listed in 3.17-3.22 Clauses of the Rules.

“Auto Casco”: A combination of the risks listed in 3.17-3.24 Clauses of the Rules.

AE can be insured against only those risks that also cover the vehicle, AE is attached to.

The Contract may provide "Car Ambulance" coverage - unforeseeable disruption of vehicle’s separate aggregates, systems, nodes and equipment as a result of the use of the vehicle, which does not allow the vehicle to start or continue its unaided running irrespective of the manufacturer’s/factory’s warranty period, particularly:

- 1) tire damage,
- 2) battery failure (including as a result of charging),
- 3) shortage of vehicle fuel,
- 4) other vehicle malfunction that does not allow it to start or continue unaided running, so that the vehicle needs evacuation,
- 5) driver being under the influence of alcohol. In this case, only the service mentioned in 3.27.5 Clause is

մեկնարկել կամ շարունակել ինքնուրույն ընթացքը, և SU-ն էվակուացնելու կարիք է առաջանում,

5) Վարորդի՝ ավտոհոյի ազդեցության տակ գտնվելը: Այս դեպքում կիրառելի է միայն 3.27.5 կետով նշված ծառայությունը:

Սույն ծածկույթով հատուցման են ենթակա հետևյալ ծառայությունների ծախսերը՝ տարեկան մինչև 300,000 ՀՀ դրամի չափով.

3.28.1. Շարժական վուլկանացման ծառայություն/անվադողերի վերանորոգում,

3.28.2. Մարտկոցի սնուցման ծառայություն,

3.28.3. Էվակուատորի ծառայություն,

3.28.4. Բենզինի մատակարարում – առաքվում է այնպիսի չափաքանակի բենզին, որը հնարավորություն կտա SU-ն հասցնել մոտակա բենզալցակայան,

3.28.5. Սթափ վարորդ – վերոնշյալ 5) կետով նկարագրված պատահարի դեպքում տրամադրվում է սթափ վարորդի ծառայություն՝ Ապահովադրի կամ Լիազորված վարորդի համար: Ծառայությունը գործում է ապահովագրության պայմանագրի ընթացքում մինչև 10 անգամ՝ Երևանում և հարակից 20 կմ շրջաններում:

3.29. Պայմանագրով կարող է նախատեսվել հետևյալ լրացուցիչ ծառայությունները (Ինչպես Մեքենայի Շտապօգնություն ծածկույթի ներքո, այնպես էլ դրանից անկախ).

3.29.1. «Մեքենայի Վարձակալություն» - այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի հետևանքով վնասված SU-ի հատուցման եղանակը ընտրվում է «վերանորոգում», Ապահովադիրը կարող է ընտրել հետևյալ ծածկույթներից մեկը.

3.29.1.1. Ապահովագրողը մինչև 14 օր ժամկետով Ապահովադիրին/Լիազորված վարորդին է տրամադրում «վարձակալված մեքենա»: Վարձակալված մեքենայի մակնիշը և մոդելը ընտրում է Ապահովագրողը: Վարձակալված մեքենայի շահագործման ընթացքում Ապահովագրողը չի կրում տվյալ մեքենայի վնասի, տույժերի, իրավախախտումների գծով որևէ պատասխանատվություն: Վարձակալված մեքենայի տրամադրման փաստը, կողմերի իրավունքներն ու պարտավորությունները արձանագրվում է Վարձակալության Պայմանագրով:

«Մեքենայի Վարձակալություն» ծածկույթով տրամադրված մեքենայի կամ մեքենաների ընդհանուր

applicable.

The mentioned services are subject to reimbursement up to AMD 300,000 annually.

Mobile vulcanization service / tires repair,

Battery power charging,

Evacuation services,

Delivery of fuel (The delivered fuel is just enough for the vehicle to get to the nearest gas station),

Sober driver – In the case of 5) scenario described above, the Insured or Authorized Drivers could use the service Sober driver. The service can be used up to 10 times during the insurance term and is available in Yerevan and within its 20 km span.

The Contract may provide for the following additional services (both under and outside the Car Ambulance).

"Car Rental" coverage - when the compensation method for a damaged vehicle due to an insurance accident is chosen "repairment", the Insured can choose one of the following options.

Insurer provides a "rented car" to the Insured/Authorized Driver for up to 14 days. The Insurer chooses rented car's make and model. During the operation of the rented car, the Insurer is not responsible for any damages, penalties or violations of the car. The fact of renting a car, the rights and obligations of the parties are recorded in the Renting Agreement.

"Car Rental" coverage is valid only once during the term of the Contract.

The total rental period of the provided vehicle or vehicles under "Car Rental" coverage cannot exceed a total of 14 days during the term of the Contract.

վարձակալության ժամկետը չի կարող գերազանցել համախառն 14 օրը ապահովագրության պայմանագրի ժամկետի ընթացքում:

3.29.1.2. Ապահովագրողը մինչև 30 օր ժամկետով Ապահովադրին/Լիազորված վարորդին հատուցում է վերջիններիս տեղափոխման ծախսերը: Սույն կետով առավելագույն հատուցման գումար է սահմանվում 100,000 ՀՀ դրամը: Ապահովագրողը իր հայեցողությամբ կարող է հատուցել տաքսի ծառայության, հեծանիվների, սկուտերների վարձակալության և այլ տեղաշարժման միջոցների ծախսերը, ինչպես նաև կարող է ընտրել այն մատակարարին կամ մատակարարներին, ում տրամադրած ծառայությունները հատուցվող են: Պայմանագրի ընթացքում Ապահովադրի կարող է ընտրել 3.29.1.1 և 3.29.1.2 կետերով նախատեսված ծառայություններից միայն մեկը: Սույն կետով տրամադրվող ծառայությունը ակտիվ է մինչև SU-ի վերանորոգման ավարտը:

3.29.2. «Անվադողերի փոխարինում» - հատուցման է ենթակա Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ապահովագրված SU անվադողերի փոխարինման ծառայության և վերջինիս կազմակերպման ծախսերը՝ ծառայությունը Ապահովագրողի միջոցով կազմակերպելու դեպքում: Ծածկույթը գործում է տարեկան 2 (երկու) անգամ, որոնցից մեկը՝ ամառային անվադողերը ձմեռայինով փոխարինելիս, մյուսը՝ ձմեռային անվադողերը ամառայինի փոխարինելիս :

Անվադողերի ձեռքբերման կամ վերոնշյալում չթվարկված այլ ծախսերը ենթակա չեն հատուցման:

3.29.3. «Տեխնիկական կազմակերպում» - հատուցման է ենթակա Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ապահովագրված SU-ի, «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ»-ով ցուցված, տեխնիկական կազմակերպման ծախսերը՝ լիցենզավորված տեխնիկական կայաններում: Տեխնիկական կայանը ընտրում է Ապահովագրողը: Տեխնիկական արժեքը և վերջինիս անցկացման համար անհրաժեշտ այլ հարակից ծախսերը (օրինակ՝ Գույքահարկ, բնապահպանական հարկ) ենթակա չեն հատուցման: Ծածկույթը գործում է տարեկան 1 անգամ:

3.29.4. «Քիմմաքրում» - հատուցման է ենթակա Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից

The Insurer reimburses the Insured/Authorized Driver their transportation expenses for a period of up to 30 days. The maximum compensation amount under this clause is AMD 100,000. The Insurer may, at its discretion, reimburse the costs of taxi service, bicycle, scooter rental and other means of transportation, and may choose the provider or providers whose services are reimbursed. During the Contract, the Insured can choose only one of the services provided for in clauses 3.29.1.1 and 3.29.1.2. The service provided under this clause is active until the repairment of the vehicle is completed.

"Tire Replacement" - the costs of tire replacement and organization of such service is subject to reimbursement during the term of the Contract, in case of organizing the service through the Insurer. The coverage is valid 2 (twice) a year, one of which is when replacing summer tires with winter tires, the other when replacing winter tires with summer tires. Purchases of tires or other costs not listed above are not subject to reimbursement.

"Organization of technical inspection" – during the validity of the Contract, the costs of organizing the technical inspection provided by the Law on Traffic Safety are subject to reimbursement if passed in licensed technical inspection stations. The inspection station is chosen by the Insurer. Costs of technical inspection and other related expenses necessary for the former (for example, Property tax, environmental tax) are not subject to reimbursement. The coverage is valid once a year.

"Dry cleaning" - the costs of the one-time dry-cleaning service of the insured vehicle after the expiration of the

հետո ապահովագրված SU-ի մեկանգամյա քիմաքրման ծառայության և դրա կազմակերպման ծախսերը՝ ծառայությունը Ապահովագրողի միջոցով կազմակերպելու դեպքում: Քիմաքրումը կատարող կազմակերպությանը ընտրում է Ապահովագրողը: Ծածկույթը ակտիվանում է միայն Պայմանագրի շրջանակներում հատուցումների բացակայության և դրա վերակնքման պարագայում:

Ապահովագրական պատահար

3.30. Ապահովագրական պատահար է համարվում 3.17-3.24 ենթակետերում թվարկված իրադարձություններից յուրաքանչյուրը, որը նախատեսված է ապահովագրության պայմանագրով և հանգեցրել է SU-ի և/կամ դրան ամրակցված ԼՍ-ի վնասվածքի, կորստի (ոչնչացմանը), և որի հետևանքով առաջացել է Ապահովագրողի՝ ապահովագրական հատուցում վճարելու պարտականությունը:

3.31. Ապահովագրական պատահար չեն համարվում հետևյալ իրադարձությունները.

3.31.1. SU-ի գործիքների հավաքակազմի, դեղատուփի, կրակմարիչի, վթարային կանգառի նշանի, ցեխահավաքների, դիմապակու խոզանակների, բանալիների, SU-ի արտադրող գործարանի կողմից նախատեսված լրակազմի մաս չհանդիսացող սարքավորումների և այլ պարագաների, հակառևանգման համակարգերի վնասվելը, կորուստը (ոչնչացումը) կամ հափշտակությունը, ինչպես նաև SU գրանցման նշանների (հաշվառման համարանիշների) գողությունը կամ հափշտակությունը, եթե դրանք ապահովագրված չեն որպես լրացուցիչ սարքավորում,

3.31.2. շահագործման արդյունքում SU-ի դետալների, բաղադրիչների, հանգույցների, ագրեգատների կտրումը, անսարքությունը, արգելակումը կամ շարքից դուրս գալը (բացառությամբ ՃՏՊ-ի հետևանքով)՝ ներառյալ օտար առարկաների կամ նյութերի ագրեգատներ ներթափանցմամբ պայմանավորված (հիդրոհարված և այլն) դեպքերը,

3.31.3. էլեկտրասարքերի, էլեկտրահաղորդալարերի, SU-ի այլ մասերի, դետալների, հանգույցների և ագրեգատների կտրումը, խափանումը, անսարքությունը, շարքից դուրս գալը, վնասվելը, եթե դրանք ապահովագրական պատահարի ուղղակի հետևանք չեն,

3.31.4. SU-ի վնասվածքը, որն առաջացել է ցանկացած

Contract is subject to reimbursement if organized through the Insurer. The company performing the dry cleaning is chosen by the Insurer. Coverage is activated only in the absence of compensation under the Contract and its renewal.

Insurance accident

Insurance accident is any of the events listed in 3.17-3.24 Clauses, which is covered by the Contract and has resulted in a damage, loss (destruction) of the vehicle and/or its attached AE, and has given a rise of the Insurer's liability to pay insurance compensation.

The following events are not considered an insurance accident:

Damage or theft of the vehicle's tool kit, first aid kit, fire extinguisher, emergency stop sign, mudguards, windshield wipers, keys, anti-theft alarm system, equipment not installed by the vehicle manufacturer, as well as theft of the vehicle's registration documents (license plates), if they were not insured as AE,

Breakdown, malfunction, breaking or derailment of parts, components, nodes, aggregates of the vehicle as a result of vehicle usage (except for the results of an accident), including cases of penetration of foreign objects or materials (water hit, etc.)

Breaking, failure, malfunction, derailment, breakdown, damage to electrical equipment, wiring, other parts of the body, details, nodes, and aggregates, if it is not a direct consequence of an insurance accident,

Damage to the vehicle caused by its transportation,

տեսակի տրանսպորտով ապահովագրված SU-ի փոխադրման, բեռնման, բեռնաթափման՝ ներառյալ տարհանման (էվակուացիայի) ընթացքում,

3.31.5. Ապահովադրի կողմից վարձակալության, վարձույթի կամ լիզինգի հանձնված ապահովագրված SU-ն Ապահովադրին չվերադարձնելը, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

3.32. Ոչ գործարանային պայմաններում վերաձևափոխված ավտոտրանսպորտային միջոցները զրկվում են ապահովագրական ծածկույթից «Հրդեհ» ռիսկի մասով, և այդ դեպքում Ապահովագրավճարը վերահաշվարկման և վերադարձման ենթակա չէ:

Ապահովագրական գումար և ապահովագրական արժեք

3.33. Ավտոկասկո ապահովագրության դեպքում Ապահովագրական գումարը չի կարող գերազանցել SU-ի ապահովագրական արժեքը (գույքի իրական արժեքը, այսինքն՝ արժեքը դրա գտնվելու վայրում ապահովագրության պայմանագրի կնքման օրվա դրությամբ):

3.34. Ապահովագրության ներկայացված SU-ի և LU-ի ապահովագրական արժեքը կարող է սահմանվել Ապահովադրի կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա, Ապահովագրողի կողմից՝ ելնելով դրանց սկզբնական արժեքից և մաշվածության նորմերից, SU-ի և LU-ի արժեքը հաստատող փաստաթղթերից:

3.35. Կողմերի համաձայնությամբ SU-ի և LU-ի արժեքը հաստատող փաստաթուղթ կարող են համարվել հաշիվ-տեղեկանքը, գնահատման ակտը, արտադրող գործարանի կամ պաշտոնական ներկայացուցչի (վաճառողի) հաշիվ-ապրանքագիրը, SU-ի ձեռք բերման չեկերը, անդորրագրերը և վճարման այլ փաստաթղթերը, մաքսային փաստաթղթերը, մատակարարների (դիլերների) գնացուցակները, կատալոգները, այլ տեղեկատու կամ պարբերական գրականությունը:

«Լրիվ», «Ոչ լրիվ համամասնական», «Ոչ համամասնական» ապահովագրություն

3.36. Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել «լրիվ», «ոչ լրիվ համամասնական», «ոչ համամասնական» ապահովագրության պայմաններով:

3.37. Ապահովագրությունը համարվում է «լրիվ», եթե

loading, unloading to any type of transport, including evacuation,

Failure to return the insured vehicle to the Insured after the expiration of rental or leasing agreement, unless otherwise stated in the Contract.

Vehicles with non-factory modifications do not have insurance coverage of Fire and the insurance premium is not subject to recalculation and refund.

Sum insured and insurance value

In the case of Auto Casco, the sum insured shall not exceed the insurance value of the vehicle (the real market value of the vehicle at the place of its location at the date of the Contract conclusion).

The insurance value of the vehicle and its AE can be determined based on the information provided by the Insured, the Insurer's approximations of the vehicle's initial value, depreciation standards and the documents certifying the value of the vehicle and AE.

By the agreement of the Parties the document certifying the value of the vehicle and the AE may be considered the purchase invoice, the valuation act, the invoice of the manufacturing factory or the official representative (seller), the checks of acquisition, receipts and other payment or customs documents, price lists of suppliers, other directories or periodicals.

Full, Not full and proportional, Non-proportional insurance

The Contract can be signed on the terms of full, not full and proportional, non-proportional insurance.

Insurance is considered full if the sum insured is equal to

ապահովագրական գումարը հավասար է SU-ի ապահովագրական արժեքին:

3.38. «Լրիվ» ապահովագրության դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է ամբողջ ծավալով, որը որոշվում է՝ համաձայն ապահովագրական հատուցման վճարման պայմանների:

3.39. Ապահովագրությունը համարվում է «ոչ լրիվ համամասնական», եթե ապահովագրական գումարը սահմանված է SU-ի ապահովագրական արժեքի գումարից պակաս:

3.40. «Ոչ լրիվ համամասնական» ապահովագրության դեպքում վնասը հատուցվում է մասնակի՝ ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի հարաբերությանը համամասնորեն:

3.41. Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել նաև «ոչ համամասնական» պայմաններով, ինչի մասին հատուկ նշում է կատարվում ապահովագրության պայմանագրում: Այս դեպքում ապահովագրական գումարը կարող է սահմանվել առավելագույնը SU-ի շուկայական արժեքի չափով:

3.42. «Ոչ համամասնական» պայմանով կնքված պայմանագրերի դեպքում ապահովագրական հատուցման իրականացման ժամանակ ապահովագրական արժեքի և ապահովագրական գումարի հարաբերակցությունը հաշվի չի առնվում. ապահովագրական գումարի սահմաններում հատուցվում է SU-ին հասցված ամբողջ վնասը՝ նվազեցրած չհատուցվող գումարի չափով:

3.43. ԼՍ-ի ապահովագրությունը (եթե այն նախատեսվում է պայմանագրով) հանդիսանում է միայն «լրիվ» ապահովագրություն:

the insurance value of the vehicle.

In the case of full insurance, the insurance indemnity is paid in full, which is determined by the terms of insurance indemnity payment.

Insurance is considered not full and proportional if the sum insured is less than the insurance value.

In the case of not full and proportional insurance, the insurance indemnity is paid partially according to the ratio of the sum insured and the insurance value.

The insurance contract may also be signed on non-proportional terms, which is specifically mentioned in the Contract. In this case, the sum insured can up to the market value of the vehicle.

In the case of contracts concluded under a non-proportional term, the ratio of the sum insured and insurance value is not taken into account when determining the insurance compensation. The compensation is done fully within the limits of sum insured while accounting for the deductible.

AE (if provided by the Contract) can only be insured with full term.

ԳԼՈՒԽ 4. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԵՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ - «ԲԱԺԻՆ Բ»

Ապահովագրության պայմանագրի առարկան և կնքման կարգը

4.1. Ավտորանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության համաձայն՝ Ապահովագրողը պարտավորվում է պայմանագրով սահմանված ապահովագրավճարի դիմաց ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում տուժած անձանց ապահովագրական գումարի սահմաններում վճարել

CHAPTER 4. MOTOR VEHICLE LIABILITY INSURANCE – SECTION B

The subject of the Contract and the signing protocol

4.1. The Rules under the Auto Casco Insurance Contract shall mean the agreement between the Parties that the Insurer, in the exchange for the agreed payment, shall be liable within the limits of sum insured to compensate for the damages done by the Insured (Authorized driver) to the victims in case of an insurance accident.

ապահովագրական հատուցում Ապահովադրի (Լիազորված վարորդի) կողմից պատճառած վնասի չափով:

4.2. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է Ապահովադրի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա, որը կազմված է Ապահովագրողի սահմանված ձևով:

4.3. Համաձայն Կանոնների՝ ապահովագրության տարածք է համարվում ՀՀ տարածքը, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Ապահովագրության օբյեկտը

4.4. Ապահովագրության օբյեկտը Ապահովադրի (Լիազորված վարորդի) գույքային շահերն են՝ կապված SU-ի սեփականատիրոջ՝ ապահովագրության պայմանագրում նշված տարածքում SU-ի շահագործման ընթացքում տուժած անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս հասցնելու արդյունքում առաջացած քաղաքացիական պատասխանատվության հետ:

Ապահովագրական պատահարներ և ապահովագրության լրացուցիչ պայմաններ

4.5. Ապահովագրական պատահար է համարվում Ապահովադրի և/կամ Լիազորված վարորդի կողմից ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ապահովագրված SU-ի օգտագործման ժամանակ ճՏՊ արդյունքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին վնաս հասցնելու իրադարձությունը, որը հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն SU-ի սեփականատիրոջ նկատմամբ վնասի հատուցման պահանջ ներկայացնելուն՝ կապված.

4.5.1. այլ ավտոտրանսպորտային միջոցների վնասման կամ ոչնչացման հետ,

4.5.2. այլ ավտոտրանսպորտային միջոցներում գտնվող գույքի վնասման կամ կորստի հետ,

4.5.3. շարժման մեջ գտնվող SU-ի հետ բախման արդյունքում այլ շարժական կամ անշարժ գույքի վնասման կամ կորուստի հետ,

4.5.4. ֆիզիկական անձանց մահվան կամ աշխատունակության կորստի (ժամանակավոր կամ մշտական) հետ:

4.6. 4.5 կետում նշված պատահարը չի համարվում ապահովագրական և դրա հետևանքով պատճառված վնասները չեն հատուցվում, եթե դրանք հասցվել են՝

4.2. Insurance contract shall be concluded based on the written or oral application of the Insured, which shall be in the form prescribed by the Insurer.

4.3. According to the Rules, the insurance area is the Republic of Armenia, unless otherwise is stated in the Contract.

Insurance object

4.4. Under Section B of the Rules, the insurance object of the Contract shall be considered the property interests of the Insured (Authorized driver) regarding the civil liability arising from the damages to victims' life, health or property during the use of the vehicle in the insurance area.

Insurance accidents and additional insurance terms

4.5. An insurance accident is the event of damage to the life, health and/or property of third parties as a result of a road accident during the use of the insured vehicle by the Insured and/or Authorized Driver within the term of the Contract. The RA legislation empowers the victim to file claim request to the owner of MV regarding:

4.5.1. damage or destruction of other motor vehicles,

4.5.2. damage or destruction of property in other motor vehicles,

4.5.3. damage or destruction of other movable or immovable property as a result of a collision with the running vehicle,

4.5.4. death or disability (temporary or permanent) of natural persons.

4.6. The event mentioned in 4.5 Clause is not considered an insurance accident and the damages caused by it shall not be compensated, if they are done:

4.6.1. Իրավաբանական անձ Ապահովադրի («Ավտոկասկո» բաժնով նշված Շահառուի) աշխատակիցներին և/կամ նրանց կողմից ծառայողական պարտականությունների կատարման նպատակով օգտագործվող ունեցվածքին (գույքին), նրանց կողմից այն պարտականությունների իրականացման ժամանակ, որոնք բխում են Ապահովադրի (Շահառուի) հետ կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերից,

4.6.2. Ապահովագրության պայմանագրում նշված SU-ի Լիազորված վարորդին և/կամ ուղևորին և/կամ SU-ում առկա (այդ թվում՝ SU-ին կցված կամ SU-ի վրա տեղադրված) գույքին,

4.6.3. Ապահովադրին («Ավտոկասկո» բաժնով նշված Շահառուին և/կամ Լիազորված վարորդին և/կամ SU-ի սեփականատիրոջը) և/կամ նրանց ընտանիքի անդամներին, խնամակալներին, ինչպես նաև այն քաղաքացիներին և/կամ նրանց գույքին, ովքեր նրանց հետ վարում են համատեղ տնտեսություն, եթե Ապահովադիրը ֆիզիկական անձ է,

4.6.4. Գույքին, որը տնօրինում, օգտագործում, տիրապետում և/կամ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված որևիցե այլ հիմքով ստացել է Ապահովադիրը («Ավտոկասկո» բաժնով նշված Շահառուն և/կամ Լիազորված վարորդը և/կամ SU-ի սեփականատերը),

4.6.5. SU-ի միջոցով մրցումների, փորձարկումների կամ ուսումնական երթևեկության ժամանակ, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

4.6.6. Շրջապատող բնական միջավայրին, պետական սեփականություն համարվող բուսական կամ կենդանական աշխարհին, օդին, մակերևութային կամ ստորգետնյա ջրերին, ընդերքին,

4.6.7. Վտանգավոր թափոնների տեղափոխման ժամանակ պատճառված վնասները, եթե դրանք կապված են բացառապես վտանգավոր թափոնների հետ,

4.6.8. Հնաոճ կամ այլ եզակի առարկաներին, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերից կամ մետաղներից պատրաստված իրերին, թանկարժեք զարդերին, արվեստի գործերին, կրոնական պաշտամունքի առարկաներին, հավաքածուներին, նկարներին, ձեռագրերին, դրամանիշերին կամ

4.6.1. To the property (wealth) used to perform job related duties of legal entity Insured's (The Beneficiary of Section A) employees, during the performance of their obligations implied by their employment or civil contract with the Insured (Beneficiary),

4.6.2. To the Authorized driver and/or passenger and/or the property in the vehicle (including property attached or mounted on the vehicle),

4.6.3. To the Insured (The Beneficiary of Section A, Authorized Driver, owner of the vehicle) and/or their family members, guardians, as well as to any citizen and/or property of their mutual household, when the Insured is a natural person,

4.6.4. To the property owned, used, possessed and/or received by the Insured (the Beneficiary of Section A and / or Authorized Driver and/or the Owner of the vehicle),

4.6.5. During the competitions, experiments or driving lessons, unless otherwise is stated in the Contract,

4.6.6. To the surrounding natural environment, state-owned flora or fauna, air, surface water or groundwater, bowels of the earth,

4.6.7. During the transportation of hazardous waste, if the damages are related exclusively to the hazardous waste,

4.6.8. To the antiquities or other unique objects, items made of precious or semiprecious stones or metals, precious ornaments, works of art, objects of religious worshipping, collections, paintings, manuscripts, coins or securities, unless otherwise is stated in the Contract,

արժեթղթերին, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

4.6.9. SU-ով, որը երրորդ անձանց հակաօրինական գործողությունների հետևանքով դուրս է եկել սեփականատիրոջ տիրապետումից,

4.6.10. SU-ն գրանցման ներկայացնելու և/կամ տեխնիկական զննման համար սահմանված ժամկետի ավարտից հետո, եթե վնասը տեղի ունենալու ժամանակ նշված գործողությունները կատարված չեն եղել, և/կամ հետևյալների գործողության ժամկետի ավարտից հետո՝

- «Տրանզիտ» գրանցման նշանների (պետհամարանիշների) վավերականության, եթե գրանցման ենթակա SU-ն սահմանված ժամկետում չի գրանցվել ոստիկանական մարմինների կողմից,
- տեխնիկական զննման անցման հավաստագրի,
- SU-ի գրանցման փաստաթղթի (SU-ի գրանցման/հաշվառման վկայագիր կամ SU-ի տեխնիկական անձնագիր),
- SU-ն վարող անձին պատկանող վարորդական իրավունքի:

Ապահովագրական գումար

4.7. Ապահովագրական գումարը (գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է իրականացնել հատուցում ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում) որոշվում է Կողմերի համաձայնությամբ:

4.8. Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, Ապահովագրողի կողմից կատարված հատուցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը:

4.9. Ապահովագրության պայմանագրում կարող են սահմանվել առանձին ապահովագրական գումարներ՝ տուժողների կյանքին և առողջությանը պատճառված վնասի համար («անձնական վնաս»), տուժողների գույքին հասցված վնասի համար («գույքային վնաս»):

ԳԼՈՒԽ 5. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԱՐՈՐԴԻ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԴԺՔԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ - «ԲԱԺԻՆ Գ»

5.1. Ավտոտրանսպորտային միջոցի վարորդի և ուղևորների դժբախտ պատահարներից ապահովագրության օբյեկտ են հանդիսանում

4.6.9. By a motor vehicle, which was out of the owner's possession because of illegal acts of third parties,

4.6.10. After the expiration of the registration, technical inspection and/or the following cases:

- The validity of Transit registration marks (number plates), if the vehicle has not been registered by the police within the prescribed period,
- The certificate of passing the technical inspection,
- The registration document (MV Registration Certificate and/or MV Technical Passport),
- The driving license of the person driving the vehicle.

Sum Insured

4.7. The sum insured (the amount within which the Insurer commits to compensate in the event of an insurance accidents) is determined by the agreement of the Parties.

4.8. The overall amount compensated by the Insurer shall not exceed the sum insured, unless otherwise is stated in the Contract.

4.9. The Contract may have separate sum insured amounts for the damages to the life and health of the injured ("personal injury") and for the damages to the property of the affected ("property damage").

CHAPTER 5. INSURANCE OF THE DRIVER AND PASSENGERS OF THE VEHICLE AGAINST PERSONAL ACCIDENTS - SECTION C

5.1. Under Section C of the Rules, the insurance object of the Contract shall be considered the property interests of the Insured or the passengers (Insured) of the vehicle at

Ապահովադրի կամ ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին ապահովագրված SU-ում գտնվող անձանց (Ապահովագրված անձ) գույքային շահերը՝ կապված նրանց կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի, ներառյալ՝ աշխատունակության կորստի հետ:

5.2. Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, Բաժին Գ-ով ապահովագրական պատահար է համարվում ապահովագրված SU-ի վնասման և/կամ ոչնչացման հետևանքով ապահովագրված SU-ում գտնվող անձանց (Ապահովագրված անձանց).

5.2.1. աշխատունակության ժամանակավոր կորուստը,

5.2.2. հաշմանդամությունը,

5.2.3. մահը,

5.2.4. բժշկական ծախսերը, որոնք անմիջականորեն կապ ունեն SU-ի վնասման:

5.3. Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել «Նստատեղերի համակարգով» կամ «Համամասնական համակարգով»:

5.4. «Նստատեղերի համակարգով» ապահովագրության դեպքում.

5.4.1. ապահովագրված նստատեղերի քանակը չի կարող գերազանցել ապահովագրված SU-ի տեխնիկական անձնագրում սահմանված նստատեղերի քանակը,

5.4.2. կարող է ապահովագրվել SU-ի միայն մեկ նստատեղը՝ վարորդինը, առջևի երկու նստատեղը կամ SU-ի տեխնիկական անձնագրում (հաշվառման վկայագրում) սահմանված նստատեղերն ամբողջությամբ,

5.4.3. ապահովագրական գումարը սահմանվում է յուրաքանչյուր նստատեղի համար առանձին:

5.5. «Համամասնական համակարգով» ապահովագրության դեպքում SU-ի ամբողջ ուղեխցիկի (SU-ում գտնվող բոլոր ապահովագրված անձանց) համար սահմանվում է ընդհանուր ապահովագրական գումար, իսկ յուրաքանչյուր ապահովագրված անձի համար ապահովագրական գումարը որոշվում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին:

5.6. «Համամասնական համակարգով» ապահովագրության դեպքում ապահովագրական պատահարի առաջացման պահին SU-ում գտնվող

the time of insurance accident regarding the damages to their life or health, including the disability.

5.2. Unless otherwise is stated in the Contract, insurance accident under "Section C" is considered to be the following conditions for the passengers (Insured) as a result of the vehicle's damage or destruction:

5.2.1. Temporary disability,

5.2.2. Permanent disability,

5.2.3. Death,

5.2.4. Medical expenses that are directly related to the accident.

5.3. The Contract can be concluded either with "Seats System" or "Proportional System".

5.4. In the case of "Seats System" insurance:

5.4.1. the number of insured seats cannot exceed the number of seats specified in the technical passport of the vehicle,

5.4.2. only one (the driver's seat), two seats (front seats) or all the seats specified in the technical passport of the vehicle (registration certificate) can be insured,

5.4.3. the sum insured is set separately for each seat.

5.5. In the case of "Proportional System" insurance, the sum insured is set for all the passengers of the vehicle and the sum insured of each person is determined at the time of the insured accident.

5.6. In the case of insurance under the "Proportional system", each passenger (including the driver) at the time of the insurance accident is insured according to the

յուրաքանչյուր ուղևոր (ներառյալ վարորդը) համարվում է ապահովագրված ընդհանուր ապահովագրական գումարի հետևյալ չափաբաժիններով.

5.6.1. ընդհանուր ապահովագրական գումարի 40%-ի չափով, եթե տուժել է 1 ապահովագրված անձ,

5.6.2. ընդհանուր ապահովագրական գումարի 35%-ի չափով, եթե տուժել է 2 ապահովագրված անձ,

5.6.3. ընդհանուր ապահովագրական գումարի 30%-ի չափով, եթե տուժել է 3 ապահովագրված անձ,

5.6.4. յուրաքանչյուր ապահովագրված անձի համար հավասար չափաբաժնով, որը որոշվում է՝ ընդհանուր ապահովագրական գումարը հարաբերելով տուժած անձանց քանակին, եթե տուժել են 4 և ավելի ապահովագրված անձ:

5.7. Ավտոտրանսպորտային միջոցի վարորդի և ուղևորների դժբախտ պատահարներից ապահովագրության դեպքում ապահովագրական պատահար չի համարվում ապահովագրված անձի մահը, հաշմանդամությունը կամ աշխատունակության ժամանակավոր կորուստը, որոնք ուղղակի կամ անուղղակի վրա են հասել ապահովագրական պատահարի առաջացմանն ուղղված Ապահովագրի, ապահովագրված անձի, Լիազորված վարորդի կամ Շահառուի դիտավորյալ գործողությունների արդյունքում՝ ներառյալ ինքնասպանությունը (ինքնասպանության փորձը) կամ ինքն իրեն մարմնական վնասվածքներ հասցնելը:

5.8. Ապահովագրված անձի մահը կամ հաշմանդամությունը, որը ուղիղ պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում ապահովագրության ժամկետի ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետ, համարվում է ապահովագրական պատահար, եթե տեղի է ունեցել դժբախտ պատահարի տեղի ունենալուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո:

5.9. «Դժբախտ պատահարի հետևանքով առաջացած բժշկական ծախսեր» դիսկով ապահովագրական պատահար է համարվում ապահովագրված անձի կողմից ապահովագրության ժամկետի ընթացքում բժշկական հաստատություն դիմելը՝ պայմանավորված ապահովագրված SU-ի վնասման և/կամ ոչնչացման հետևանքով ապահովագրված SU-ում գտնվող անձանց կողմից բժշկական օգնություն ստանալու անհրաժեշտությամբ:

following proportions:

5.6.1. 40% of the sum insured, if 1 insured person was injured,

5.6.2. 35% of the sum insured, if 2 insured persons were injured,

5.6.3. 30% of the sum insured, if 3 insured persons were injured,

5.6.4. equal proportions for each insured person, determined by the ratio of the sum insured to the number of injured persons, if 4 or more people were injured.

5.7. In case of the driver's and passenger's personal accident insurance, death, permanent disability or temporary disability of the Insured is not considered an insurance accident, if it is directly or indirectly caused by the intentional acts of the Insured, the Insured, the Authorized driver or the Beneficiary, including injuries caused as a result of suicide (suicide attempt) or self-harm.

5.8. The Insured's death or permanent disability that is directly related to an accident that occurred during the insurance term is considered an insurance accident if it occurred no later than six months after the road accident.

5.9. The risk of "medical expenses directly related to an accident" is considered the treatment of the Insured in a medical institution during the insurance term in connection with the necessity of obtaining medical assistance as a result of damage and/or destruction of the vehicle.

**ԳԼՈՒԽ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Ապահովագրության պայմանագրի կնքումը**

6.1. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է Ապահովադրի կամ նրա ներկայացուցչի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա:

6.2. Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել Ապահովագրողի կողմից Ապահովադրի բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա կազմված ապահովագրության վկայագիրը Ապահովադրին տրամադրելու միջոցով:

6.3. Ապահովագրության պայմանագիրը կազմվում է գրավոր և կարող է կնքվել մեկ փաստաթղթի կազմման կամ Ապահովագրողից Ապահովադրին նրա գրավոր դիմումի հիման վրա Ապահովագրողի ստորագրությամբ ապահովագրական վկայագրի (վկայականի կամ այլ փաստաթղթի) շնորհման ճանապարհով:

Ապահովագրության Պայմանագրի կնքման դեպքում Ապահովագրողը Ապահովադրին պարտավոր է տրամադրել սույն Կանոնները կամ սույն Կանոններից քաղվածք, որոնք ստեղծվել են սույն Կանոնների դրույթների հիման վրա և վերաբերվում են ապահովագրության կոնկրետ ծրագրին (ապահովագրական պրոդուկտին), և որի հիման վրա էլ կնքվում է Պայմանագիրը (այդ մասին նշվում է Պայմանագրում):

Սույն Կանոնները Ապահովադրին կարող են տրամադրվել ինչպես թղթային տպված տարբերակով (այդ թվում՝ գրքույկի տեսքով), այնպես էլ համացանցում Կանոնների էլեկտրոնային հասցեն (URL) տրամադրելու, կամ Կանոնների ֆայլը Ապահովադրի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին ուղարկման միջոցով, կամ թվային կրիչներով (CD, DVD, և այլն), կամ Ապահովագրողի պաշտոնական www.efes.am կայքում Կանոնները տեղադրելու միջոցով:

Եթե կանոնները տրամադրվել են այլ եղանակով, քան թղթային տեքստն է, Ապահովադրի (Շահառուն) չի ազատվում սույն Կանոններով նախատեսված ոչ մի պարտավորությունից: Ապահովադրը ցանկացած ժամանակ իրավունք ունի դիմել Ապահովագրողին և ստանալ Կանոնների թղթային օրինակը:

6.4. Ապահովագրողն Ապահովադրի գրավոր (բանավոր) դիմումը ստանալուց հետո իրավունք ունի նրանից պահանջել SU-ի զննման հնարավորություն,

CHAPTER 6. THE INSURANCE CONTRACT

Signing the Contract

6.1 The Contract is concluded based on a written or oral application of the Insured or their representative.

6.2 The Insurer may conclude the Contract based on a written or oral application of the Insured by providing the Insured with the Certificate.

6.3 The Contract is concluded in written form and may be signed with a single document or by providing the Insured with the Certificate with the signature of the Insurer based on the former's written application.

When concluding the Contract, the Insurer is obliged to provide the Insured with the Rules or an excerpt from the Rules, which are created based on the provisions of the Rules and refer to the specific insurance plan (insurance product), and on the basis of which the Contract is signed.

The Rules may be provided to the Insured either in a hard copy (including in the form of a brochure) or by providing the link to the Rules (URL), or by sending the Rules file to the Insured's e-mail address, or by a digital drive (CD, DVD, etc.), or by posting the Rules on the official website of the Insurer www.efes.am.

If the Rules are provided in a form other than the hard copy, the Insured is not released from performing their obligations set forth in the Rules. The Insured has the right to ask for the hard copy of the Rules at any time.

6.4 After receiving the written (oral) application of the Insured, the Insurer has the right to request the vehicle inspection or additional information directly or indirectly

լրացուցիչ տվյալների տրամադրում ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված այն հանգամանքների հետ, որոնք նշանակություն ունեն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա տեղի ունենալու դեպքում վնասի հնարավոր մեծության որոշման համար:

6.5. Ապահովադիրը Ապահովագրողի պահանջով պարտավոր է տրամադրել.

6.5.1. Իրավաբանական անձ Ապահովադրի հիմնադիր փաստաթղթեր,

6.5.2. Ապահովադրի կամ նրա անունից հանդես եկող անձի ինքնությունը հաստատող փաստաթուղթ,

6.5.3. Ապահովադրի ներկայացուցչի կարգավիճակը և լիազորությունների ծավալը հաստատող լիազորագիր կամ այլ փաստաթուղթ,

6.5.4. ՏՄ-ի գրանցման փաստաթղթեր,

6.5.5. Ապահովագրողի պահանջով ապահովագրական շահը հաստատող փաստաթղթեր,

6.5.6. Ապահովագրական ռիսկը գնահատելու համար Ապահովագրողին անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

6.6. Ապահովագրության պայմանագիր կնքելիս Ապահովադիրը (նրա ներկայացուցիչը) Ապահովագրողի պահանջով ՏՄ-ն պետք է ներկայացնի Ապահովագրողին զննման համար: Ընդ որում, Չննման իրականացումը Պայմանագրով կարող է սահմանվել որպես Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբ:

6.7. Եթե ապահովագրության պայմանագրի կնքումից հետո հայտնի դառնա, որ Ապահովադիրը տրամադրել է կեղծ տեղեկություններ կամ թաքցրել է դրանք, ապա Ապահովագրողն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցման վճարումը, միակողմանի դադարեցնելու պայմանագիրը և պահանջելու հատուցել իր կրած ծախսերը:

6.8. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրության պայմանագրի կնքման հայտը (չկնքել կամ վերակնքել ապահովագրության պայմանագիր):

Ապահովագրավճար

6.9. Ապահովագրավճարի չափը, վճարման կարգը և ժամկետները սահմանվում են Պայմանագրով:

6.10. Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի չափը որոշելիս բազային ապահովագրական սակագնի նկատմամբ կիրառել նվազեցնող կամ բարձրացնող գործակիցներ:

related to the probability of insurance accident and assessing the possible damage of thereof.

6.5 Upon the request of the Insurer, the Insured shall provide:

6.5.1 Legal person Insured's founding documents,

6.5.2 Document confirming the identity of the Insured or their representative,

6.5.3 A power of attorney or other document confirming the status of the Insured's representative and the extent of their powers,

6.5.4 The vehicle's registration documents,

6.5.5 Documents confirming the insurance interest,

6.5.6 Other documents required by the Insurer to assess the insurance risk.

6.6 When signing the Contract, the Insured (their representative) shall, upon the Insurer's request, submit the vehicle for inspection. In addition, the inspection of the vehicle may be defined as the start of the Contract term.

6.7 If after signing the Contract it becomes known that the Insured has concealed or provided false information, then the Insurer has the right to refuse insurance indemnity payment, unilaterally terminate the Contract and demand reimbursement of their incurred expenses.

6.8 The Insurer has the right to reject the application for signing an insurance contract (not to conclude or renew the Contract).

Insurance premium

6.9 The amount, procedure and terms of the insurance premium shall be determined by the Contract.

6.10 The Insurer can reduce or increase the base insurance rate when determining the insurance premium amount.

6.11. Տարածամկետ վճարման կարգ սահմանող պայմանագրերի դեպքում Ապահովագրողը իրավունք ունի ապահովագրական հատուցումը վճարել միայն պայմանագրի ամբողջ ժամկետի համար ապահովագրավճարի վճարումից հետո:

6.12. Ապահովագրավճարը անկանխիկ եղանակով վճարելու դեպքում Ապահովագրողը պարտավոր է վճարման հանձնարարականում հղում կատարել հաշվի համարին և ամսաթվին, որի հիման վրա կատարվում է ապահովագրավճարի վճարումը, և/կամ ապահովագրության պայմանագրի (վկայագրի) համարին, որի համար իրականացվում է ապահովագրավճարի վճարում:

6.13. Անկանխիկ եղանակով վճարելու դեպքում ապահովագրավճարը համարվում է վճարված Ապահովագրողի հաշվարկային հաշվին մուտքագրվելու պահին:

6.14. Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովագրի կողմից ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) չվճարելու դեպքում Ապահովագրողը իրավունք ունի չսահմանել լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար, չծանուցել այդ մասին Ապահովագրին, միակողմանի դադարեցնել Պայմանագիրը, և ազատվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրավճարի հերթական մասի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով առաջացած վնասների դիմաց ապահովագրական հատուցումներ իրականացնելու պարտականություններից:

Ապահովագրողը իր հայեցողությամբ իրավունք ունի սահմանել ապահովագրավճարի վճարման լրացուցիչ ժամկետներ և այդ մասին ծանուցել Ապահովագրին: Լրացուցիչ ժամկետի սահմանման դեպքում Ապահովագրողը միևնույն է ազատվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրավճարի հերթական մասի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով առաջացած վնասների դիմաց ապահովագրական հատուցումներ իրականացնելու պարտականություններից:

6.15. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

6.11 In case of a Contract signed with multiple payments option, the Insurer can pay the insurance indemnity only after the insurance premium for the whole term of the Contract is paid by the Insured.

6.12 In case of non-cash payment of the insurance premium, the Insured shall refer to the account number and the date on which the insurance premium is paid in the payment order.

6.13 In case of non-cash payment, the insurance premium is considered paid once the payment deposit has entered the Insurer's account.

6.14 If the Insured does not pay the insurance premium (the regular part of the insurance premium) within the timeframe and in the amount specified in the Contract/Certificate, the Insurer has the right not to give additional term for the payment of the insurance premium. The Insurer also has the right not to notify the Insured and unilaterally terminate the Contract and is exempted from its responsibilities after 00:00 of the following day.

The Insurer may, at its discretion, set additional terms for payment of the insurance premium and notify the Insured about it. Even when the extra time is set, the Insurer is exempted from the obligation to provide compensation for the damages incurred by the accidents occurring after 00:00 on the day following the date of payment of the next portion of the insurance premium specified in the Contract/Certificate.

6.15 Unless otherwise is stated in the Contract, the

մեկ տարուց պակաս ժամկետով կնքվող Պայմանագրերի դեպքում Պայմանագրի ապահովագրավճարը հաշվարկվում է ըստ հետևյալ աղյուսակի.

Ապահովագրության ժամկետ ամիսներով	Ապահովագրավճարը տոկոսներով տարեկան ապահովագրավճարի նկատմամբ
1	30 %
2	37 %
3	44 %
4	50 %
5	56 %
6	63 %
7	69 %
8	75 %
9	81 %
10	88 %
11	94 %
12	100 %

6.16. Ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրական հատուցումը վճարելուց հետո Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը (պատասխանատվության սահմանաչափը) նվազեցվում է կատարված ապահովագրական հատուցման չափով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

6.17. Ապահովագրական հատուցում ստանալուց հետո, Ապահովագրիչը իրավունք ունի վերականգնել ապահովագրական գումարի (պատասխանատվության սահմանաչափի) չափը՝ սույն Կանոնների համաձայն ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետի համար կնքելով լրացուցիչ պայմանագիր կամ համաձայնագիր և վճարելով լրացուցիչ ապահովագրավճար, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով (մեկ տարի ժամկետով պայմանագրերի համար).

$$I_{in} = C_v \times U_q \times U_{\text{տ}} / 12$$

I_{in} - սկզբնական ապահովագրական գումարը վերականգնելու համար լրացուցիչ ապահովագրավճար
 C_v - վճարված ապահովագրական հատուցման գումար
 U_q - պայմանագրով գործող ապահովագրական սակագին

following adjusting rates for the insurance premium are applied for the contracts with validity of less than one year:

Insurance period in months	Insurance premium as a percentage of the annual insurance premium
1	30 %
2	37 %
3	44 %
4	50 %
5	56 %
6	63 %
7	69 %
8	75 %
9	81 %
10	88 %
11	94 %
12	100 %

6.16 Upon the payment of insurance indemnity as a result of an insurance accident, the sum insured (total liability amount) specified in the Contract shall be reduced by the amount of insurance indemnity made, unless otherwise is stated in the Contract.

6.17 The Insured has the right to recover the initial amount of the sum insured (total liability amount) by signing an additional contract or agreement for the remaining term of the insurance contract through the payment of additional insurance premium calculated as follows (for one year contracts):

$$P_{\text{add}} = I_{in} \times R_t \times M_m / 12$$

P_{add} - Additional insurance premium for recovering the initial insurance amount
 I_{in} - Insurance indemnity paid
 R_t - Insurance rate of the Contract

Ա_մ – պայմանագրի չլրացած լրիվ ամիսների քանակ:

Պայմանագրի ուժի մեջ մտնելը, դրա գործողությունը

6.18. Ապահովագրության պայմանագիրը ուժի մեջ է մտնում ապահովագրության վկայագրում/պայմանագրում սահմանված ժամկետից:

Ռիսկի աստիճանի փոփոխություն

6.19. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին ներկայացված հանգամանքների յուրաքանչյուր փոփոխության մասին Ապահովագրողը պարտավոր է անհապաղ հայտնել Ապահովագրողին ցանկացած հնարավոր միջոցով (իսկ երեք աշխատանքային օրվա ընթացքում նաև գրավոր), այդ թվում նաև, եթե փոփոխությունը վերաբերում է հետևյալ հանգամանքներին.

6.19.1 SU-ի օտարում, գրավադրում, վարձակալության տրամադրում և/կամ տնօրինման և օգտագործման այլ սահմանափակում,

6.19.2 համարանշված մասերի փոփոխություն (թափք, շարժիչ, հաշվառման համարանիշ և այլն),

6.19.3 SU-ի բանալիների, հեռակառավարման վահանակի, հակաառևանգման համակարգի/սարքավորման կամ գրանցման փաստաթղթերի հափշտակություն, կորուստ,

6.19.4 SU-ի հաշվառումից հանում կամ հաշվառման վկայագրում (գրանցման այլ փաստաթղթերում) արտացոլված տեղեկությունների փոփոխություն,

6.19.5 SU-ի շահագործման, օգտագործման նպատակի փոփոխություն,

6.19.6 Լրացուցիչ սարքավորումների տեղադրում,

6.19.7 SU-ի համալրում հատուկ միջոցներով, այդ թվում՝ միջոցներով, որոնք գործարկում են շարժիչը հեռավորության վրա կամ ավտոմատ կերպով կամ տրամադրում են SU-ի մուտքի հնարավորություն,

6.19.8 այլ փոփոխություններ, որոնք կարող են ազդեցություն ունենալ ապահովագրական ռիսկի աստիճանի վրա:

6.20. Ռիսկի աստիճանի փոփոխության դեպքում, այդ թվում նաև՝ Լիազորված վարորդի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման հետևանքով տեղի ունեցած պատահարի, 1 SU-ի գծով տվյալ SU-ի ապահովագրական գումարի

R_m– Number of remaining full months of the Contract.

The contract entering into force and its validity

6.18 The Contract enters into force from the date specified in the Certificate/Contract.

Change in risk level

6.19 During the policy term the Insured shall promptly notify the Insurer about any changes regarding the information provided prior to the Contract conclusion (and in writing within three business days), including the following cases:

6.19.1 Alienation, pledging, leasing and/or other restriction of possession and use of the vehicle,

6.19.2 Change of marked parts (body, engine, license plate, etc.),

6.19.3 Theft or loss of keys, remote control, anti-theft system/equipment or registration,

6.19.4 Deregistration of the vehicle or modification of the information reflected in the registration certificate (or in other registration documents),

6.19.5 Change in the purpose of exploitation and use of the vehicle,

6.19.6 Installation of additional equipment,

6.19.7 Replenishing the vehicle with special equipment, including means that automatically start the engine at a distance or provide entry access to the vehicle,

6.19.8 Other changes that may affect the insurance risk level.

6.20 In case of change in risk level, including an accident caused by violation of the traffic rules by the Authorized driver, payment of insurance compensation of 30% or more of the sum insured of a single vehicle, 2 and more occurrences of insurance accidents during the

30% և ավելի գումարով ապահովագրական հատուցման վճարման, ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում 2 և ավելի պատահար տեղի ունենալու կամ ապահովագրության պայմանագրի վնասաբերությունը³ 65%-ը գերազանցելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջել ապահովագրության պայմանագրի պայմանների վերանայում կամ վճարելու ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար:

6.21. Եթե Ապահովագրողը սույն կանոնների 6.20 կետի հիմքերով Ապահովագրողի՝ ապահովագրության պայմանագրի պայմանները փոխելու կամ լրացուցիչ ապահովագրավճար վճարելու պահանջը մերժում է, ապա Ապահովագրողը կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով միակողմանի կարգով լուծել ապահովագրության պայմանագիրը:

6.22. Ապահովագրողի կամ Շահառուի կողմից Կանոնների 6.19 կետում սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը և լուծել պայմանագիրը՝ առանց վերադարձնելու վճարված ապահովագրավճարը, ինչպես նաև պահանջել դրա հետ կապված վնասների հատուցում:

6.23. Կանոններով Ապահովագրողն իրավունք ունի պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ռիսկի աստիճանը մեծացնող հանգամանքների վերացման կամ ռիսկի աստիճանի նվազեցման համար Ապահովագրողին կամ Լիազորված վարորդին տալ հրահանգներ և սահմանել հրահանգների կատարման ժամկետ:

6.24. Ապահովագրողի կողմից տրված հրահանգների համաձայն և սահմանված ժամկետում Ապահովագրողի կամ Լիազորված վարորդի կողմից ռիսկի աստիճանը մեծացնող հանգամանքների չվերացման կամ ռիսկի աստիճանի նվազեցման հրահանգների չկատարման դեպքում, համապատասխան հրահանգների կատարման վերջնաժամկետի ամսաթվից Ապահովագրողն ազատվում է ապահովագրական

validity of the Contract or the loss ratio⁴ exceeding 65%, the Insurer has the right to require revision of the terms of the Contract or to make a payment in proportion to the increased risk.

6.21 If the Insured rejects the Insurer's request to change the terms of the Contract or to pay additional insurance premium based on change in risk level described in 6.20 Clause of the Rules, then the Insurer may unilaterally terminate the Contract in accordance with the legislation of the Republic of Armenia.

6.22 In case of failure or improper performance of obligations set forth by 6.19 Clause by the Insured, the Insurer shall have the right to refuse the payment of the insurance compensation and terminate the contract without refunding the paid insurance premium as well as has the right to claim damages related thereof.

6.23 According to the Rules, the Insurer has the right to give instructions to the Insured or the Authorized Driver to eliminate or reduce the circumstances that increase the risk level during the validity of the Contract term and to set a deadline for execution of the mentioned instructions.

6.24 If the Insured or the Authorized Driver fails to comply with instructions to eliminate circumstances that increase the risk level or reduce the risk level in the prescribed period, the Insurer is released from the obligation to pay the insurance compensation after the deadline of the mentioned term and has the right to unilaterally terminate the Contract without refund of the insurance premium.

³ Վնասաբերության հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով՝ Վնասաբերությունը = (վճարված հատուցումներ + հատուցման ենթակա գումարներ) / վաստակած ապահովագրավճար * 100: Վաստակած ապահովագրավճար = Ընդամենը ապահովագրավճար * պայմանագրի գործողության լրացած օրեր / պայմանագրի ընդհանուր օրեր:

⁴ The calculation of the loss ratio is done by the following formula: Loss ratio = (paid compensations + compensations to be paid) / earned premium * 100. Earned premium = Total premium * Days of contract past / Overall days of contract.

հատուցման վճարելու պարտականությունից և իրավունք ունի միակողմանի լուծելու ապահովագրության պայմանագիրը՝ առանց վերադարձնելու ապահովագրավճարը:

Ապահովագրության պայմանագրի դադարումը

6.25. Ապահովագրության պայմանագրի գործողությունը դադարում է հետևյալ դեպքերում՝

6.25.1 ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետն ավարտվել է,

6.25.2 ապահովագրության պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի չափով Ապահովագրողը կատարել է ապահովագրական հատուցում վճարելու գծով իր պարտավորությունները,

6.25.3 Ապահովագրողը կամ Ապահովագրողը հրաժարվել է պայմանագրից, ընդ որում Կողմերն իրավունք ունեն հրաժարվել ապահովագրության պայմանագրից ցանկացած պահի՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 օր առաջ ծանուցելով մյուս Կողմին, պայմանով, որ հրաժարման պահին ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը չի վերացել,

6.25.4 Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, եթե մյուս Կողմը թույլ է տվել ապահովագրության պայմանագրի էական խախտում,

6.25.5 ապահովագրության պայմանագիրը լուծվել է Ապահովագրողի և Ապահովագրողի փոխհամաձայնությամբ,

6.25.6 տեղի է ունեցել ապահովագրված SU-ի կորուստ, որն առաջացել է ապահովագրական պատահար չհանդիսացող հանգամանքների հետևանքով,

6.25.7 ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, Կանոններով և պայմանագրով նախատեսված այլ դեպքերում

6.25.8 SU-ի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել է Ապահովագրողից կամ Շահառուից կամ Պայմանագրով սահմանված Սեփականատերից տարբերվող այլ անձի անունով, կամ SU-ն հանվել է հաշվառումից,

6.26. Ապահովագրության պայմանագրի լուծման դեպքում Ապահովագրողը կիրառում է վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկման ստորև նշված երկու եղանակներից որևէ մեկը.

6.26.1 «Ժամանակին համընթաց» (pro rata), այսինքն՝ Ապահովագրողը համամասնորեն վերադարձնում է ապահովագրության պայմանագրի չլրացած օրերի

Termination of the Contract

6.25 The Contract is terminated in the following cases:

6.25.1 The term of the Contract has expired,

6.25.2 The Insurer has fulfilled its liability to pay insurance compensation within the sum insured defined in the Contract,

6.25.3 The Insured or the Insurer has terminated the Contract. The Parties have the right to terminate the Contract at any time by notifying the other Party at least 15 days in advance, while acknowledging that the probability of occurrence of insurance accidents at the time of termination has not disappeared,

6.25.4 Upon the initiative of either Party, if the other Party has committed a material violation of the Contract,

6.25.5 The Contract has been terminated by the agreement between the Insured and the Insurer,

6.25.6 Loss of the vehicle due to circumstances, which did not constitute an insurance accident,

6.25.7 In other cases prescribed by the RA Civil Code, the Rules and the Contract.

6.25.8 Ownership of the vehicle has been registered in the name of a person other than the Insured or the Beneficiary or the Owner defined by the Contract, or the vehicle has been removed from registration,

6.26 In case of termination of the Contract, the Insurer applies one of the following two methods of calculating the insurance premium to be returned:

6.26.1 Pro rata: the Insurer proportionally reimburses the premium paid for the remaining days of the insurance contract without any deductions,

գծով վճարված ապահովագրավճարը առանց որևէ մասհանումների,

6.26.2 «Կարճաժամկետ» (short term), այսինքն՝ Ապահովագրողը նետոտ ապահովագրավճարից համամասնորեն վերադարձնում է ապահովագրության պայմանագրի չլրացած օրերի գծով վճարված ապահովագրավճարը: Նետոտ ապահովագրավճար է համարվում բրուտոտ ապահովագրավճարի և գործառնական և պայմանագրի թողարկման համար կատարվող այլ ծախսերի՝ բեռնվածության տարբերությունը: Բեռնվածության գումարը կազմում է առաջին տարվա ապահովագրավճարի 30%-ը և յուրաքանչյուր հաջորդ տարվա ապահովագրավճարի 20%-ը:

6.26.3 Կարճաժամկետ եղանակով դադարեցման դեպքում Ապահովագրողի նախընտրությամբ կարող է կիրառվել Բեռնվածության ավելի ցածր մասնաբաժիններ, քան նշված է 6.26.2 կետում, կամ ընդհանրապես որևէ մասհանումներ չկատարվել:

6.26.4 Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, Պայմանագիրը համարվում է կնքված «Կարճաժամկետ» դադարեցման սկզբունքով:

6.27. ՏՄ-ի Առևանգման, հափշտակման կամ լրիվ ոչնչացման դեպքում ապահովագրության պայմանագրի դադարեցման ժամանակ ապահովագրավճարի վերադարձ չի իրականացվում:

6.28. Ապահովագրության պայմանագրի դադարեցման դեպքում Ապահովագրողը պարտավոր է, Ապահովագրողի պահանջի դեպքում, Ապահովագրողին վերադարձնել նրան տրված ապահովագրության վկայագիրը:

6.29. 6.25.3 կետով սահմանված կարգով Ապահովագրողի նախաձեռնությամբ ապահովագրության պայմանագրի լուծման դեպքում, վերջինս Ապահովագրողին վերադարձնում է վճարված ապահովագրավճարը «ժամանակին համընթաց» մեթոդով:

6.30. 6.25.3 կետով սահմանված կարգով Ապահովագրողի նախաձեռնությամբ ապահովագրության պայմանագրի լուծման դեպքում, Ապահովագրողն Ապահովագրողին վերադարձնում է վճարված ապահովագրավճարը «կարճաժամկետ» մեթոդով, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

6.31. 6.25.8 կետով սահմանված հիմքերով դադարեցման դեպքում, եթե Ապահովագրողը

6.26.2 Short term: the Insurer proportionally returns the net premium paid on the remaining days of insurance policy. Net insurance premium is the difference between the gross insurance premium and operating, contract issuance costs. The load amount is 30% of the first year's insurance premium and 20% in the following years.

6.26.3 In the event of a short-term termination, the Insurer may, at its own discretion, apply no or lower load shares than the ones mentioned in 6.26.2 Clause.

6.26.4 Unless otherwise is stated in the Contract, it is concluded under the short term termination principle.

6.27 In case of carjacking, theft or complete destruction of the vehicle, no insurance premium shall be refunded upon the termination of the Contract.

6.28 In case of termination of the Contract, the Insured is obliged to return to the Insurer the Certificate issued to him, if requested by the Insurer.

6.29 In the event of termination of the Contract upon the Insurer's initiative, as set forth in 6.25.3 Clause, the latter shall return the paid premium to the Insured in pro-rata principle.

6.30 In case of termination of the Contract upon the Insured's initiative, as set forth in 6.25.3 Clause, the Insurer shall return the paid premium to the Insured in short-term principle, unless otherwise in stated in the Contract.

6.31 In the event of termination as defined in 6.25.8 Clause, when the Insured has submitted substantiating

ներկայացրել է հիմքերը հավաստող փաստաթղթեր (Օրինակ՝ առքուվաճառքի պայմանագիր), ապա Ապահովագրողն Ապահովադրին վերադարձնում է վճարված ապահովագրավճարը «ժամանակին համընթաց» մեթոդով՝ առանց բեռնվածության գումարը պահելու:

6.32. Ապահովադրի կողմից պայմանագրի խախտման համար Ապահովագրողի նախաձեռնությամբ պայմանագրի լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում վճարված ապահովագրավճարները:

documents (e.g., purchase agreement), the Insurer shall return the paid premium in pro-rata principle without any deductions for administrative expenses.

6.32 In case of termination of the Contract by the Insurer due to Insured's violation of the Contract terms, the Insured shall not be reimbursed for the paid insurance premiums.

**ԳԼՈՒԽ 7. ԿՈՂՄԵՐԻ
ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ**

**Ապահովադրի պարտականությունները
ապահովագրական պարտահարի դեպքում**

7.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը կամ Լիազորված վարորդը կամ Շահառուն պարտավոր է.

7.1.1. տեղի ունեցած պատահարի մասին անհապաղ հայտնել (կախված պատահարի բնույթից) համապատասխան իրավասու մարմիններին,

7.1.2. ապահովագրական պատահարի մասին անպահաղ հայտնել Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին, տրամադրել պատահարի վերաբերյալ հնարավորինս ամբողջական տեղեկատվություն (պատահարի վայրը, ժամը, առաջացման հանգամանքները, պատահարի այլ մասնակցի և SU-ի տվյալները և այլն) և խիստ հետևել Ապահովագրողի ներկայացուցչի հրահանգներին,

7.1.3. ձեռնարկել բոլոր հնարավոր և ողջամիտ միջոցները հնարավոր վնասները կանխելու և նվազեցնելու համար՝ հետևելով Ապահովագրողի ցուցումներին, պատահարի վայրում սպասել Ապահովագրողի ներկայացուցչի ժամանելուն,

7.1.4. չլքել ապահովագրական պատահարի վայրը, չտեղաշարժել SU-ն և պատահարի հետ կապ ունեցող առարկաները մինչև Ապահովագրողի և համապատասխան իրավասու մարմնի ներկայացուցչի ժամանումը և ապահովագրական պատահարի փաստով բոլոր անհրաժեշտ տեղեկատվության արձանագրումը,

7.1.5. Ապահովադիրը (Լիազորված վարորդը)

**CHAPTER 7. RELATIONSHIP OF THE PARTIES IN THE
EVENT OF AN INSURANCE ACCIDENT**

**Obligations of the Insured in the event of an insurance
accident**

7.1. In the event of an insurance accident, the Insured or the Authorized driver or the Beneficiary shall:

7.1.1. immediately report the incident (depending on the nature of the incident) to the appropriate competent authorities,

7.1.2. inform the Insurer or its representative about the insurance accident, provide detailed information about the incident (the time and place of the accident, circumstances of its occurrence, information on the accident's other participant's self and vehicle, etc.) and strictly follow the instructions of the Insurer's representative,

7.1.3. take all possible and reasonable measures to prevent and reduce possible losses, by following the instructions of the Insurer and wait for the arrival of the latter's representative,

7.1.4. not leave the site of the insurance accident, not move the vehicle and the items related to the accident until the arrival of the Insurer and the representative of the appropriate competent authority to record all the necessary information about the insurance accident,

7.1.5. not wait for the arrival of the Insurer's

իրավունք ունի չսպասել Ապահովագրողի ներկայացուցչի ժամանելուն, եթե վերջինս հեռախոսով հայտնել է պատահարի վայր իր չժամանելու մասին և տվել է համապատասխան հետագա ցուցումներ,

7.1.6. մինչև Ապահովագրողի ներկայացուցչի ժամանումը ապահովագրական պատահարի վայրը միջոցներ ձեռնարկել պատահարի մասնակից մյուս SU-ի տվյալները, պատահարում ներգրավված այլ կողմերի և վկաների ինքնությունը (անունները, հասցեները և անձը հաստատող փաստաթղթի տվյալները) պարզելու ուղղությամբ,

7.1.7. Ապահովագրողի պահանջի առկայության դեպքում պահանջել իրավասու մարմիններից ՃՏՊ հետաքննության նպատակով վարչական վարույթի իրականացում,

7.1.8. ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահից 24 ժամվա ընթացքում չօգտագործել ոգելից խմիչք և Ապահովագրողի պահանջով անցնել սթափության վիճակի զննություն, եթե անգամ Լիազորված վարորդը անցել է նման զննություն,

7.1.9. մինչև պատահարի առաջացման մեջ կողմերի մեղավորության հարցի լուծումը (համապատասխան իրավասու մարմնի կողմից տրված եզրակացության կամ Ապահովագրողի կողմից նշանակված փորձաքննության արդյունքների հիման վրա) չընդունել մեղավորությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ,

7.1.10. ապահովագրական պատահարից անմիջապես հետո (կամ Ապահովագրողի կողմից սահմանված այլ ժամկետում) տրամադրել SU-ն Ապահովագրողի ներկայացուցչին զննման, փորձաքննության նպատակով, ինչպես նաև չօտարել, չհանձնել այլ անձանց և իրականացնել պատշաճ պահպանությունը հնարավոր հափշտակությունները կանխելու նպատակով, և Ապահովագրողի նրա հետ համաձայնեցնել հատուցման կարգավորման հետ կապված քայլերը,

7.1.11. մինչև ապահովագրական հատուցման գործընթացի վերջնական կարգավորումը առանց Ապահովագրողի համաձայնության չիրականացնել ապահովագրված SU-ի վերանորոգման որևէ աշխատանք, պահպանել վնասված SU-ի մասերը կամ մնացորդները:

7.2. Ապահովագրողի կամ Լիազորված վարորդի

representatives, if the latter have informed they would not visit the accident site and have given appropriate further instructions,

7.1.6. take measures to determine the identities (names, addresses and identification document details) of the insurance accident's other participants, as well as involved parties and witnesses prior to the arrival of the Insurer's representative at the insurance accident site,

7.1.7. request the competent authorities to conduct an administrative investigation of the traffic accident upon the Insurer's initiative,

7.1.8. not use alcohol within 24 hours from the accident to pass a sobriety check at the request of the Insurer, even if the Authorized Driver has prior passed such an inspection,

7.1.9. not admit guilt until the issuance of the parties' fault in the occurrence of the insurance accident (based on the conclusion of the appropriate competent authority or the results of an examination appointed by the Insurer), except in cases when an administrative case has been filed with civil, criminal or judicial procedure,

7.1.10. provide the vehicle to the Insurer's representative immediately after the insurance accident (or within the timeframe prescribed by the Insurer) for inspection, examination, as well as do not alienate, hand over to other persons and carry out proper protection in order to prevent possible thefts, and determine with the Insurer the compensation settlement steps,

7.1.11. not, without the Insurer's consent, initiate any repairment works until the settlement of insurance compensation is finalized, save the damaged parts or residual components of the vehicle.

7.2. In case of failure or improper performance of the

կողմից կանոնների 7.1 կետի պահանջները (պահանջներից որևէ մեկը) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը:

7.3. Ապահովագրված SU-ի վարորդը և Ապահովագրողի ներկայացուցիչը պատահարի վայրում ստորագրում են պատահարի հանգամանքների վերաբերյալ արձանագրություն:

7.4. Ապահովագրական պատահարի վայրում համապատասխան մարմինների՝ ոստիկանության, բժշկական ծառայության, փրկարարների, հրշեջ ծառայության և այլնի առկայության դեպքում վերջիններս կարող են ներգրավվել նախնական արձանագրության (ակտի) կազմմանը և ստորագրմանը:

Ապահովագրական պատահարի դեպքում Ապահովագրողին ներկայացվող փաստաթղթերը

7.5. Ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը կայացնելու համար Ապահովագրողը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել հետևյալ փաստաթղթերի բնօրինակները.

7.5.1. ապահովագրական հատուցման գրավոր դիմում պատահարի հանգամանքների մանրամասն նկարագրությամբ,

7.5.2. ապահովագրության վկայագիր (պայմանագիր),

7.5.3. անձը հաստատող փաստաթուղթ (իրավաբանական անձի դեպքում պետական գրանցման վկայականը ղեկավար անձի տվյալները պարունակող ներդիրով),

7.5.4. ապահովագրական պատահարի պահին SU-ն վարող անձի անձնագիրը և վարորդական վկայականը,

7.5.5. ապահովագրված SU-ի գրանցման փաստաթղթերը, SU-ի տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքը հավաստող փաստաթղթեր,

7.5.6. ապահովագրական պատահարի պահին SU-ի վարորդի կողմից ալկոհոլի, թմրանյութերի, տոքսիկ կամ հոգեմետ նյութերի օգտագործման փաստի վերաբերյալ անցկացված քննության փաստաթղթերը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրողի ներկայացուցիչը ազատել է վարորդին նման քննությունն անցնելու պարտականությունից,

7.5.7. ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը հաստատող փաստաթուղթ՝

requirements set forth in 7.1 Clause of the Rules by the Insured or the Authorized driver, the Insurer has the right to reject the insurance compensation.

7.3. The driver of the insured vehicle and the Insurer's representative sign a report on the circumstances of the accident at the accident site.

7.4. In case of presence of the relevant authorities - police, medical service, fire department, etc. - at the site of the accident, they may be involved in the preparation and the signing of the preliminary protocol (act).

Documents submitted to the Insurer in case of an insured accident

7.5. To make a decision on the payment of insurance compensation, the Insured (Beneficiary) must provide the Insurer with the original copies of the following documents:

7.5.1. written application of insurance compensation with a detailed description of the accident's circumstances,

7.5.2. the Certificate (the Contract),

7.5.3. identification document (in case of a legal person - state registration certificate with an insert of the executive's personal information),

7.5.4. passport and driver's license of the person driving the Vehicle at the time of the insurance accident,

7.5.5. registration documents of the insured vehicle, documents certifying the right of ownership, use and possession of the vehicle,

7.5.6. documents certifying the use of alcohol, drugs, toxic or psychotropic substances by the vehicle's driver, unless the Insurer's representative waived the necessity of such an exam,

7.5.7. a document confirming the accident's occurrence by the relevant competent authority (in case of a vehicle

տրամադրված համապատասխան իրավասու մարմնի կողմից (SU-ի վնասման դեպքում ճանապարհային ոստիկանության կողմից տրամադրված սահմանված ձևի տեղեկանք, ինչպես նաև վարչական իրավախախտման գործով կազմված արձանագրություն և տեղեկանք)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան փաստաթուղթը կազմել է Ապահովագրողի լիազորված փորձագետը և ազատել Ապահովադրին նման փաստաթղթի ներկայացման պարտականությունից,

7.5.8. Հրդեհի դեպքում՝ համապատասխան իրավասու մարմնի կողմից կայացված որոշումը/տեղեկանքը կամ դրա պատճենը, որը առնվազն պետք է պարունակի հրդեհի պատճառների, դրա արդյունքում վնաս պատճառված գույքի մասին տեղեկատվություն,

7.5.9. Ապահովագրողի պահանջով վնասի չափը հաստատող փաստաթղթեր,

7.5.10. երրորդ անձի կողմից ապահովագրված SU-ին վնաս հասցված լինելու դեպքում հաղորդվում են վերջինիս տվյալները և ապահովագրական պատահարի մասնակից SU-ի տվյալները,

7.5.11. ՀՀ տարածքից դուրս տեղի ունեցած ՃՏՊ դեպքում Ապահովադիրը/Շահառուն պարտավոր է տրամադրել ՃՏՊ տեսանկարահանումը՝ արձանագրված կամ SU մեջ տեղադրված, կամ արտաքին տեսանկարահանող սարքի միջոցով: Պահանջը չկատարելու դեպքում Ապահովագրողը իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը:

7.5.12. Բաժին Բ-ով ապահովագրական պատահարի դեպքում՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով և «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի կողմից հաստատված կանոններով սահմանված փաստաթղթերը,

7.5.13. այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ կլինեն Ապահովագրողին ապահովագրական հատուցման մասին որոշում կայացնելու համար:

7.6. Ապահովագրված SU-ի Առևանգման դեպքում 7.5-րդ կետով սահմանված փաստաթղթերից բացի Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին լրացուցիչ ներկայացնել հետևյալ փաստաթղթերի

damage, a certificate in the form prescribed by the road police, as well as an administrative offense record and reference), unless Insurer's authorized expert compiled the corresponding document and waived the requirement to submit such document for the Insured,

7.5.8. in case of a fire, a decision/reference made by the appropriate authority or a copy thereof, which must contain the details of the fire's causes and information on the damaged property,

7.5.9. documents confirming the damage amount upon the Insurer's request,

7.5.10. in case of damage to the vehicle by the illegal acts of third parties, both personal information of the latter and information on the participant vehicle of the insurance accident,

7.5.11. In case of road accident happening outside of the Republic of Armenia, the Insured (the Beneficiary) shall present the video recording of the accident via either a device in the vehicle or an external device. The failure to submit the recording may result in rejection of compensation by the Insurer.

7.5.12. In case of an insurance accident under section B, the documents prescribed by the RA law on compulsory insurance of liability arising from the use of motor vehicles and the rules approved by the Bureau of Motor Insurers of Armenia,

7.5.13. other additional documents required by the Insurer to make the decision on insurance compensation.

7.6. In case of theft of the insured vehicle, in addition to the documents specified in 7.5 Clause, the Insured must additionally submit to the Insurer the original copies of the following documents:

բնօրինակները.

7.6.1. SU-ի գրանցման փաստաթղթերը (գրանցման վկայականը, SU-ի հաշվառման վկայագիրը, դրանց փոխարինող փաստաթղթերը), ինչպես նաև տվյալ SU-ի փականների բանալիների բնօրինակների, հակաառևանգման էլեկտրոնային համակարգերի ակտիվատորների լրիվ հավաքածուն: Այն դեպքում, երբ SU-ի գրանցման վկայականը և/կամ անձնագիրը կցված են քրեական գործի նյութերին, Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել տվյալ փաստաթղթերի՝ քննիչի կողմից հաստատված պատճենները,

7.6.2. Ապահովադիրը պետք է ներկայացնի Կանոնների 7.6.1 կետում նշված SU-ի գրանցման փաստաթղթերի բնօրինակը, իսկ SU-ի բանկում գրավադրված լինելու դեպքում՝ բանկի կողմից գրավի ձևակերպման ժամանակ SU-ի սեփականատիրոջը տրված գրանցման փաստաթղթի պատճենը՝ վավերացված բանկի կողմից: Բանկի կողմից հետագայում ապահովագրական պատահարի վրա հասնելուց հետո, տրված SU-ի գրանցման փաստաթղթերի պատճենները սույն կետի իմաստով չեն հանդիսանա պատշաճ փաստաթուղթ:

7.6.3. Նախաքննության կասեցման որոշումը, քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը, կամ տվյալ քրեական գործով վերջնական օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կամ Քրեական գործի քննության արդյունքների վերաբերյալ ոստիկանությունից ստացված տեղեկանքը՝ ոչ ուշ քան դրա կազմումից 30 օրվա ընթացքում,

7.6.4. Ապահովադրի (իսկ եթե Ապահովադիրը SU-ի սեփականատերը չէ, ապա նաև ապահովագրված SU-ի սեփականատիրոջ) պարտավորագիր առ այն, որ պարտավորվում է SU-ի հայտնաբերման դեպքում վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումը:

7.7. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է ապահովագրական հատուցման դիմումը Ապահովագրողին ներկայացնել ապահովագրական պատահարի օրվանից հետո 3 ամսվա ընթացքում:

7.8. Եթե Ապահովադիրը (Շահառուն) Կանոնների 7.7 կետով սահմանված ժամկետում ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում չի ներկայացնում պատահարի հետևանքով անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում

7.6.1. vehicle registration documents (registration certificate, vehicle enrollment certificate, substituting documents thereof), as well as the full set of original keys of the vehicle's locks, activators of electronic anti-theft systems. If the registration certificate and/or vehicle passport are attached to the criminal case file, the Insured must submit copies of these documents certified by the investigator,

7.6.2. the Insured must submit the original copies of the vehicle registration documents specified in 7.6.1 Clause of the Rules: in case of the vehicle being pledged in the bank - a copy of the registration document issued and certified by the bank to the owner of the vehicle when making the pledge. Copies of the vehicle registration documents issued by the bank after the occurrence of an insurance accident shall not be considered an appropriate document within the sense of this clause,

7.6.3. a decision to suspend the preliminary investigation, to terminate the criminal proceedings or a final legal act of the given criminal case or a certificate received from the police about the results of the criminal investigation - no later than 30 days after its compilation,

7.6.4. a commitment agreement from the Insured (and if the Insured is not the owner of the vehicle, then the owner of the insured vehicle) that they assume the responsibility to return the insurance compensation prior received when finding the vehicle.

7.7. To receive insurance compensation, the Insured (Beneficiary) must submit an application for insurance compensation to the Insurer within 3 months from the date of the insurance accident.

7.8. If the Insured (Beneficiary) does not submit an application for insurance compensation within the period prescribed in 7.7 Clause of the Rules, as a result of being in an unconscious or other state that makes it impossible to apply for insurance compensation within the established

լինելու պատճառով, որն անհնարին է դարձրել նրա կողմից Ապահովագրողին սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական հատուցում ստանալու համար դիմելը, ապա եռամսյա ժամկետը սկսում է գործել ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում ներկայացնելն անհնարին դարձնող հանգամանքների վերացման կամ ապահովագրական պատահարի մասին տեղեկանալու օրվանից:

7.9. Ապահովադիրը և Շահառուն կրում են ապահովագրական հատուցում ստանալու համար սահմանված ժամկետում դիմելու անհնարինության 7.8 կետով սահմանված ապացուցման պարտականությունը:

7.10. Ապահովադիրը կամ Շահառուն պարտավոր է Կանոններով սահմանված ապահովագրական հատուցման համար փաստաթղթերը ներկայացնել ապահովագրական հատուցման դիմումի ներկայացման օրվանից երեք ամսվա ընթացքում: Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև 6 (վեց) ամիս, եթե Ապահովադիրը (Շահառուն) գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին: Նշված ժամկետների խախտման դեպքում Ապահովագրող իրավունք ունի փակել հատուցման դիմումը և մերժել հատուցման վճարումը:

7.11. Ապահովագրողը իրավունք ունի ստուգել Ապահովադիրի և/կամ Շահառուի (ներառյալ՝ Լիազորված վարորդների) կողմից հաղորդած տեղեկատվության արժանահատվությունը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անձամբ հետաքննել ապահովագրական պատահարի հանգամանքները՝ կատարելով անհրաժեշտ հարցումներ: Այս դեպքում Կանոնների 8.1 կետով սահմանված ժամկետը մինչև 90 օր ժամկետով կասեցվում է (բացառությամբ Ապահովագրողի նախաձեռնությամբ հարուցված քրեական կամ վարչական վարույթի իրականացումից, որի դեպքում նշված ժամկետը երկարաձգվում է մինչև այդ վարույթի ավարտը): Ապահովագրողը կասեցման որոշման դեպքում պարտավոր է այդ մասին գրավոր (ներառյալ՝ էլեկտրոնային նամակի միջոցով) ծանուցել Ապահովադիրին/Շահառուին: 90 օրյա ժամկետի

period and procedure, the three-month period shall take effect from the date of elimination of such circumstances or from the date of them being informed about the insurance accident.

7.9. The Insured and the Beneficiary shall bear the obligation to prove the impossibility of applying for insurance compensation within the prescribed period set in 7.8 Clause.

7.10. The Insured or the Beneficiary must submit the documents for insurance compensation prescribed by the Rules within three months from the date of submitting the application for insurance compensation. The Insurer, based on the circumstances of the case, may extend this period up to 6 (six) months if the Insured (Beneficiary) submits a written request detailing the obstacles of submitting the documents or any other reason for extending the set term. In case of violation of the mentioned terms, the Insurer has the right to close the compensation application and to refuse the payment of the compensation.

7.11. The Insurer has the right to check the validity of the information provided by the Insured and / or the Beneficiary (including Authorized Drivers), to personally investigate the circumstances of the insurance accident in accordance with the RA legislation, by making the necessary inquiries. In this case, the period specified in Clause 8.1 of the Rules shall be suspended for up to 90 days (except for criminal or administrative proceedings initiated by the Insurer, in which case the said period shall be extended until the end of the proceedings). In case of a suspension decision, the Insurer must notify the Insured / Beneficiary in writing (including by e-mail). After the expiration of the 90-day period, the Insurer is obliged to make a decision on paying the insurance compensation or refusing to pay the compensation within 20 working days.

ավարտից հետո Ապահովագրողը 20 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է կայացնել ապահովագրական հատուցում վճարելու կամ հատուցման վճարումը մերժելու մասին որոշում:

ԳԼՈՒԽ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշումը, ապահովագրական հատուցման ժամկետները

8.1. Ապահովագրողն ապահովագրական պատահարի կարգավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո ոչ ուշ, քան 20 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է քննել հայտը և կայացնել ապահովագրական հատուցում վճարելու կամ հատուցման վճարումը մերժելու մասին որոշում:

8.2. Դրամական արտահայտությամբ ապահովագրական հատուցման դեպքում հատուցումը վճարվում է ապահովագրական հատուցման որոշման կայացումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

8.3. Ապահովագրական հատուցման մերժման դեպքում Ապահովագրողը կայացնում է պատճառաբանված որոշում, որը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով կա՛մ Պայմանագրում, կա՛մ Հատուցման դիմումում նշված էլեկտրոնային հասցեին ուղարկում է (կամ տրամադրում է առձեռն) Ապահովադրին (Շահառուին):

Ապահովագրական հատուցման իրականացման ընդհանուր սկզբունքները

8.4. Սույն Կանոններով հատուցման ենթակա գումարի հաշվարկը իրականացվում է՝ հաշվի առնելով.

- ապահովագրական պատահարի արդյունքում հասցված վնասի չափը,
- Ապահովագրողի պատասխանատվության սահմանաչափը (ապահովագրական գումարը),
- ապահովագրության «լրիվ», «ոչ լրիվ համամասնական» կամ «ոչ համամասնական» լինելը,
- ապահովագրական հատուցման համակարգը,
- ՏՄ-ի մաշվածությունը,
- չհատուցվող գումարը,
- ՏՄ-ի և ԼՄ-ի մնացորդային արժեքները:

8.5. ՏՄ վնասման, լրիվ կործանման կամ առևանգման (գողության) դեպքում Ապահովագրողը

CHAPTER 8. INSURANCE COMPENSATION

Decision on payment and terms of the insurance compensation

8.1. The Insurer is obliged to review the application and make a decision on satisfaction or rejection of the insurance claim within 20 working days after receiving all the necessary documents to regulate the insurance accident.

8.2. In the case of an insurance indemnity being paid in monetary terms, the compensation is paid within 5 working days after the decision on the insurance claim is made.

8.3. In case of rejection of the claim, the Insurer makes a grounded decision, which is sent to the Insured (Beneficiary) by a registered mail (or handed directly) to an e-mail address mentioned either in the Contract or in the compensation application form within 5 days.

General principles of insurance compensation

8.4. The calculation of the amount to be reimbursed under the Rules is carried out considering:

- the amount of damage caused by the insurance accident,
- liability cap of the Insurer (the sum insured),
- full, not full and proportional or non- proportional insurance type,
- insurance compensation system,
- depreciation of the vehicle,
- deductible amount,
- residual values of the vehicle and additional equipment.

8.5. In case of damage, complete destruction, or theft (carjacking) of the vehicle, the Insurer has the right to

իրավունք ունի հաշվարկել ապահովագրական հատուցման չափը՝ հաշվի առնելով ՏՄ մաշվածությունը: Եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրված ՏՄ նկատմամբ կիրառվում են տարեկան մաշվածության հետևյալ տոկոսադրույքները.

Թողարկման տարեթվից հաշվարկված տարիք	Մաշվածության տոկոսադրույք
1-ին տարի	20%
2 – 3 տարի	30%
4 տարի	40%
5 տարի	45%
6 տարի	50%
7 տարի	55%
8 տարի	60%
9 և ավելի տարի	65%

Մաշվածությունը հաշվարկվում է սկսած ՏՄ թողարկման տարվանից մինչև ապահովագրական պատահարի առաջացման օրը (համամասնորեն ապահովագրական պայմանագրի գործողության ցանկացած օրվա համար):

Ավտոտրանսպորտային միջոցի վնասված բաղադրիչի ձեռքբերման արժեքի որոշման հիմքում հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետությունում ձևավորված օգտագործված պահեստամասերի շուկայում առկա հնարավորին նույն տարիքի և մաշվածության գործարանային արտադրության բաղադրիչի արժեքը, դրա բացակայության դեպքում՝ գործարանային արտադրության համանման նոր բաղադրիչի արժեքը՝ մասհանելով վերոնշյալ աղյուսակում նշված մաշվածության տոկոսները, իսկ նախորդ երկուսի բացակայության դեպքում՝ ոչ գործարանային արտադրության համանման նոր բաղադրիչի արժեքը,

Ընդ որում՝

ա. եթե ապացուցվում է, որ վնասված բաղադրիչը եղել է համապատասխան ավտոտրանսպորտային միջոցից տարբերվող հնության (ավելի նոր կամ ավելի հին), ապա դրա ձեռքբերման արժեքի հաշվարկման համար կիրառվում է տվյալ բաղադրիչի տարիքին համարժեք տարիքի ավտոտրանսպորտային միջոցի բաղադրիչի գնահատման համար նախատեսված մեթոդաբանությունը,

բ. եթե ապացուցվում է, որ վնասված բաղադրիչը եղել է

calculate the amount of insurance compensation taking into account the depreciation of the vehicle. Unless otherwise is stated in the Contract, the following annual depreciation schedule applies.

<i>Age calculated from the date of issue</i>	<i>Depreciation rate</i>
1 st year	20%
2 – 3 years	30%
4 years	40%
5 years	45%
6 years	50%
7 years	55%
8 years	60%
9 and more years	65%

Depreciation is calculated from the year of issue of the vehicle until the day of the insurance accident (proportionally for any day of the Contract).

To determine the price of acquisition of damaged parts of the vehicle, the market price of factory manufactured used components with relatively the same age and wear and tear is taken. In case of its absence, the market price of new factory manufactured component is taken, which is reduced according to depreciation table above. When both these options are not available, new non-factory manufactured component price is taken:

- When proved that the damaged component had other age (newer or older) than the vehicle's, then the acquisition value is calculated according to the component's age,
- When proved that the damaged component was manufactured in a non-factory setting, the acquisition value is determined according to new non-factory similar component without accounting for depreciation.

The mentioned methodology is applied both in damage assessment and the repairment arrangement processes.

The Contract / Policy may provide for the provision "No depreciation". If there is a provision, the above-mentioned depreciation rate is set at 0%, regardless of the year of production of the car. This provision does not apply in case of theft or complete loss of the vehicle.

ոչ գործարանային արտադրության, ապա դրա ձեռքբերման արժեքի հաշվարկման համար հիմք է ընդունվում ոչ գործարանային արտադրության համանման բաղադրիչի արժեքը՝ առանց որևէ մաշվածություն մասհանելու,

Նշված մեթոդաբանությունը կիրառվում է Ա՝ ՏՄ վնասի գնահատման, Ա՛ վերջինիս վերանորոգման կազմակերպման դեպքում:

Պայմանագրով/Վկայագրով կարող է նախատեսվել «Մաշվածության չկիրառում» դրույթը: Դրույթի առկայության դեպքում վերոնշյալ տարեկան մաշվածության տոկոսադրույքը սահմանվում է 0%՝ անկախ մեքենայի արտադրման տարեթվից: Սույն դրույթը չի գործում ՏՄ ամբողջական կորստի և առևանգման դեպքում:

8.6. Այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի արդյունքում Ապահովադիրն հասցված վնասը հատուցվում է երրորդ անձանց կողմից, Ապահովագրողը հատուցում է միայն հատուցման ենթակա գումարի և երրորդ անձանց կողմից իրականացված հատուցման գումարի տարբերության չափով:

8.7. Մեղավոր անձի կողմից ապահովագրված ՏՄ-ին հասցված վնասի ամբողջական հատուցման դեպքում Ապահովադիրը պարտավոր է վերադարձնել ապահովագրական հատուցումը:

8.8. ՏՄ-ի վերանորոգման դեպքում, եթե ապահովագրության պայմանագրով նախատեսված է ոչ պայմանական չհատուցվող գումար, ապա Ապահովադիրը Ապահովագրողին վճարում է (ետ է վերադարձնում) չհատուցվող գումարին համարժեք գումարը:

8.9. Ապահովագրողն իրավունք ունի վերանորոգման իրականացումից կամ լրիվ ոչնչացման պայմանով հատուցումից հետո Ապահովադրից պահանջել իրեն փոխանցել վերանորոգման ընթացքում փոխարինված դետալները և հանգույցները (ՏՄ-ի մնացորդները): Ապահովադրի/Շահառուի կողմից սույն պահանջը չկատարելու դեպքում Ապահովագրողը իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակի մերժել հատուցումը, կամ չտրամադրված դետալի և/կամ հանգույցի իրական արժեքի չափով նվազեցնել հատուցման չափը:

8.10. Դրամական արտահայտությամբ հատուցման

8.6. If the damage caused to the Insured as a result of an insurance accident is compensated by a third party, the Insurer shall compensate only the difference of the amount to be reimbursed and the amount of compensation received from the third party.

8.7. If the guilty party fully reimburses for damages done to the insured vehicle, the Insured is obliged to return the received insurance compensation.

8.8. In the case of vehicle repairment, if the Contract presumes a non-conditional deductible, the Insured pays (returns) the Insurer the amount equal to the deductible.

8.9. The Insurer has the right to require the Insured to hand over the parts and components (vehicle residual parts) that were replaced after the repairment process or receiving compensation for total loss. In case of non-fulfillment of this requirement by the Insured / Beneficiary, the Insurer has the right to reject the compensation in whole or in part, or to reduce the amount of compensation by the amount of the not-transferred part and / or the fair value of the node.

8.10. In case of insurance compensation being paid in

դեպքում Ապահովագրողը իրավունք ունի հատուցման ենթակա գումարը հաշվանցել հատուցման դրական որոշման կայացման օրվա դրությամբ Ապահովագրի՝ Ընկերության հետ կնքված ցանկացած տեսակի պայմանագրով ժամկետանց պարտավորությունների գումարների հետ:

Քաժին Ա-ի դեպքում ապահովագրական հատուցման ծավալը

Ապահովագրված SU-ի վնասման դեպքում հատուցման ծավալը

8.11. SU-ի վնասման դեպքում ապահովագրական հատուցումը կարող է իրականացվել հետևյալ եղանակներից մեկով՝

8.11.1. համարժեք գույքով (վնասված SU-ի վերանորոգման կազմակերպմամբ)

8.11.2. դրամական արտահայտությամբ:

8.12. Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրական պատահարի արդյունքում պատճառված վնասի հատուցման եղանակը ընտրվում է Ապահովագրողի կողմից, ընդ որում համարժեք գույքով (վնասված SU-ի վերանորոգման կազմակերպմամբ) տարբերակի ընտրության դեպքում Ապահովագրողն է նաև ընտրում վերանորոգման եղանակը, վայրը, վերանորոգող կազմակերպությունը:

8.13. Ապահովագրիչը Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ կարող է հրաժարվել հատուցման վերանորոգման տարբերակից և ընտրել դրամական արտահայտությամբ հատուցման եղանակը:

8.14. 8.11.1 կետով սահմանված եղանակով՝ համարժեք գույքով (վնասված SU-ի վերանորոգման կազմակերպմամբ), հատուցումն իրականացվում է Ապահովագրողի կողմից տրված ուղեգրի կամ գրավոր (ներառյալ՝ էլեկտրոնային նամակի միջոցով), ինչպես նաև Ապահովագրողի պաշտոնական ծայնագրվող հեռախոսահամարով բանավոր տեղեկացման հիման վրա վնասված SU-ի վերանորոգման կազմակերպման միջոցով Ապահովագրողի գործընկեր ավտովերանորոգման կազմակերպություններում, որոնց հետ Ապահովագրողն ունի համապատասխան պայմանագրեր: Ապահովագրողի կողմից վերանորոգման ուղղորդման ամսաթվից հետո եռամսյա ժամկետում վնասված SU-ն վերանորոգման չներկայացնելու դեպքում Ապահովագրողը իրավունք

monetary terms, the Insurer has the right to set off the amount to be reimbursed with the amounts of the Insured's overdue obligations under a contract of any kind concluded with the Insurer as of the date of the compensation decision.

Compensation amount under Section A

The limits of insurance compensation in case of damage to the insured vehicle

8.11. In case of damage to the vehicle, the insurance indemnity can be made in one of the following ways:

8.11.1. in equivalent property (repairment arrangement of the damaged vehicle)

8.11.2. in monetary terms.

8.12. Unless the Contract states otherwise, the compensation method for the damage caused by the insurance accident is chosen by the Insurer, and in case of choosing an equivalent property (repairment arrangement of the damaged vehicle), the Insurer also chooses the method of repairment works, the location, and the repairing company.

8.13. The Insured has the right to reject the repairment option of the vehicle and choose the method of monetary compensation.

8.14. Based on the method prescribed in 8.11.1 Clause, the compensation with equivalent property (repairment of the damaged vehicle), shall be provided on the basis of referral ticket or written (including an e-mail) or oral (via the recorded telephone call of the Insurer) notification about the repairment of the damaged vehicle in partnering repairment organizations of the Insurer, with whom the latter has appropriate contracts. The Insurer has the right to refuse the insurance compensation if the damaged vehicle is not submitted for repair within three months after the date of the repairment notification. Moreover, the Insured / Beneficiary has no right to submit a new application for compensation after the expiration of the mentioned period (regarding the same insurance accident).

ունի մերժել ապահովագրական հատուցումը: Ընդ որում Ապահովագրող/Շահառուն նշված ժամկետի ավարտից հետո իրավունք չունի ներկայացնել հատուցման նոր դիմում (միևնույն ապահովագրական պատահարի վերաբերյալ):

8.15. 8.11.1 կետով սահմանված եղանակով հատուցման դեպքում վերանորոգման ծառայությունների համար վճարումն Ապահովագրողի կողմից ուղղակիորեն կատարվում է վերանորոգող կազմակերպությանը:

8.16. Ապահովագրողի կողմից 8.11.1 կետով սահմանված եղանակով հատուցումը կատարելու հնարավորության բացակայության դեպքում⁵ Ապահովագրողն իրավունք ունի հատուցումը վճարել դրամական արտայտությամբ:

8.17. Առանձին դեպքերում Ապահովագրողի համաձայնությամբ ապահովագրված SU-ի վերանորոգումը կարող է կազմակերպվել Ապահովագրողի կողմից ընտրված ավտովերանորոգման կազմակերպության կողմից:

8.18. 8.11.2 կետով սահմանված եղանակով (դրամական արտահայտությամբ) հատուցման իրականացման դեպքում ապահովագրական հատուցման մեծությունը որոշվում է Ապահովագրողի կամ Ապահովագրողի կողմից մատնանշած անկախ փորձագետի կողմից կազմված վնասի գնահատման հաշվետվության հիման վրա՝ ելնելով SU-ի զննության արդյունքներից:

8.19. Ապահովագրված SU-ի վնասման դեպքում ապահովագրության պայմանագրով հատուցվում է.

- Ապահովագրական պատահարի արդյունքում SU-ի վնասված և փոխարինման ենթակա դետալների և հանգույցների ձեռքբերման և տեղադրման արժեքը,
- SU-ի վերանորոգման համար օգտագործվող նյութերի արժեքը,
- Ապահովագրական պատահարի հետ կապված SU-ի վնասների վերանորոգման ծախսերը՝ բացառությամբ «լրիվ ոչնչացման» դեպքերի,
- ապահովագրված SU-ի և LU-ի փրկությանը, վնասների նվազեցմանն ուղղված անհրաժեշտ և նպատակահարմար ծախսերը՝ ներառյալ մինչև մոտակա պահպանության կամ վերանորոգման կետ

8.15. In case of compensation based on the method prescribed in 8.11.1 Clause, the Insurer pays the insurance compensation directly to the repairing organization.

8.16. If the insurance compensation method prescribed in 8.11.1 Clause is not available, the Insurer can pay the compensation in monetary terms.

8.17. In distinct cases, with the consent of the Insurer the repairment of the insured vehicle can be organized by the Insured's organization of choice.

8.18. In case of compensation (in monetary terms) as defined in 8.11.2 Clause, the amount of insurance compensation is determined based on the damage assessment report prepared by the Insurer or an independent expert appointed by the Insurer, made from the vehicle inspection's results.

8.19. In case of damage to the insured vehicle, under the Contract the following costs are reimbursed:

- The cost of purchasing and replacing parts that are damaged and subject to replacement because of an insurance accident,
- Cost of materials used for the vehicle repairment,
- Expenses for the repairment of the vehicle damages related to the insurance accident, except for the total loss cases,
- necessary and reasonable expenses for saving and reducing the losses of insured vehicle and additional equipment, including reasonable expenses for transporting the damaged vehicle to the nearest salvation or repairment center (up to AMD 30,000) if it cannot run

⁵ Նշված եղանակով հատուցումն իրականացնելու հնարավորության բացակայության որոշումը կայացնում է Ապահովագրողը:

վնասված SU-ի տեղափոխման ողջամիտ ծախսերը (մինչև 30,000 ՀՀ դրամ), եթե այն չի կարող շարժվել ինքնուրույն: Նշված ծախսերի կատարման դեպքում Ապահովադիրը և/կամ SU լիազորված վարորդը պարտավոր է ներկայացնել ծախսը հավաստող փաստաթղթեր,

- թաքնված վնասների և թերությունների վերացման ծախսերը, եթե փաստաթղթորեն հիմնավորված է, որ նշված վնասները և թերությունները առաջացել են ապահովագրական պատահարի հետևանքով:

8.20. Եթե տեխնիկապես հնարավոր չէ կամ տնտեսապես աննպատակահարմար է վերականգնել ապահովագրական պատահարի արդյունքում վնասված SU-ի որևէ դետալ կամ հանգույց, ապա պատճառված վնասի չափի մեջ հաշվարկվում է համանման դետալի, ագրեգատի կամ հանգույցի ձեռքբերման և տեղադրման արժեքը, իսկ ապահովագրական հատուցումը SU-ի վերանորոգման տարբերակով իրականացվելու դեպքում վերանորոգող կազմակերպության կողմից SU-ի վրա տեղադրվում է համանման դետալ:

8.21. Ապահովագրական պատահարի արդյունքում վնասված պահեստամասերը և դետալները փոխարինվում են բացառապես այն դեպքում, երբ դրանք վերանորոգման արդյունքում չեն կարող բերվել հետագա օգտագործման համար պիտանի վիճակի (մինչև ապահովագրական պատահարը եղած վիճակին մոտ վիճակի) կամ դրանց վերանորոգումը Ապահովագրողի կողմից համարվում է տնտեսապես աննպատակահարմար:

8.22. Յանկացած դեպքում, եթե վնասված և փոխարինման ենթակա հանգույցը կամ դետալը եղել է ոչ գործարանային արտադրության, ապա վնասի գնահատման հիմքում դրվում են ոչ գործարանային արտադրության հանգույցի կամ դետալի արժեքը:

8.23. Վնասված և փոխարինման ենթակա հանգույցների կամ դետալների, վերանորոգման համար օգտագործվող նյութերի արժեքները հաշվարկվում են՝ հիմք ընդունելով Ապահովագրողի գործընկեր (Ապահովագրողի հետ համագործակցող) կազմակերպությունների (համանման ապրանքների առքուվաճառքով զբաղվող և/կամ ավտովերանորոգող կազմակերպությունների) կողմից տրամադրված գները:

8.24. Ապահովագրված SU-ի վերանորոգման

independently. In case of the mentioned expenses, the Insured and / or the authorized driver of the vehicle is obliged to submit documents confirming the expenses,

- Costs of elimination of hidden damages and defects if it is documented that the specified damages and shortcomings came directly from the insurance accident.

8.20. If it is technically impossible or economically impractical to repair any part or node from the vehicle damaged in the insurance accident, the cost of acquiring and installing a similar part, unit or node is calculated in the total damage amount, and in the case of insurance compensation in a form of vehicle repairment, the repairing organization installs a similar part on the vehicle.

8.21. Damaged parts and details from the insurance accident are replaced only if they cannot be brought to a condition suitable for further use (to a state close before the insurance accident) with repairment, or its repairment is considered economically impractical by the Insurer.

8.22. In any case, if the damaged and to be replaced node or part was not of factory production, then the estimation of the damage will be based on the value of the non-factory production of such node or part.

8.23. The costs of damaged and subject to replacement components or parts, materials used for repairment are determined upon the prices provided by the Insurer's partner organizations (that cooperate with the Insurer and engage in the purchase and sale of similar products and/or auto repair organizations).

8.24. Repairment costs for the insured vehicle are

ծախսերը հաշվարկվում են Ապահովագրողի գործընկեր ավտովերանորոգող կազմակերպությունների կողմից տրամադրված գների հիման վրա:

8.25. ՀՀ հանգույցների կամ դետալների շուկայում վնասված և փոխարինման ենթակա հանգույցների կամ դետալների բացակայության դեպքում Ապահովագրողը հատուցում է դրանց՝ շուկայական արժեքով ձեռքբերման, փոխադրման և մաքսազերծման ողջամիտ ծախսերը:

8.26. 8.25 կետում նշված փոխադրման ծախսերը հաշվարկելիս Ապահովագրողը հիմք է վերցնում փոխադրման իրականացման համար անհրաժեշտ և նվազագույն ծախսերը, որոնց մեջ չեն ներառվում փոխադրումը կարճ ժամկետներում իրականացնելու և/կամ այլ լրացուցիչ ծառայությունների վճարները:

8.27. Վերանորոգման աշխատանքների ընթացքում թաքնված վնասների և թերությունների հայտնաբերման դեպքում Ապահովագրողը պարտավոր է մինչև դրանց վերացումը գրավոր տեղեկացնել դրանց մասին Ապահովագրողին:

8.28. Ապահովագրողը չի հատուցում թաքնված վնասների և թերությունների վերացման ծախսերը, եթե դրանք իրականացվել են առանց իր հետ համաձայնեցնելու:

8.29. Պատահարի արդյունքում վնասված ավտոտրանսպորտային միջոցը վերանորոգումից հետո մինչև հաջորդ ապահովագրական պատահարը պետք է ներկայացվի Ապահովագրողին զննման նպատակով, հակառակ դեպքում հետագայում վնասված դետալների գծով ներկայացված ապահովագրական հատուցման հայտերը չեն քննարկվի և այդ հայտերի գծով ապահովագրական հատուցում չի իրականացվի, իսկ SU-ի ամբողջական ոչնչացման, հափշտակման կամ Առևանգման դեպքում ապահովագրական հատուցման տրամադրման ժամանակ վնասվածքների և մաշվածության գումարը կհանվի հատուցման գումարից՝ Ապահովագրողի հաշվարկների համաձայն:

Ապահովագրված SU-ի և/կամ LU-ի լրիվ ոչնչացման դեպքում հարուցման ծավալը

8.30. SU-ի և/կամ LU-ի լրիվ ոչնչացման դեպքում, երբ SU-ի և/կամ LU-ի վերանորոգման արժեքը (ներառյալ ապահովագրության պայմանագրով հատուցման ենթակա ծախսերը) հավասար է կամ գերազանցում է SU-ի և/կամ LU-ի շուկայական արժեքի 80%-ը,

determined upon the prices provided by the Insurer's partner repairment organizations.

8.25. In the absence of the damaged or subject to replacement nodes or parts in the RA market, the Insurer shall compensate reasonable costs of acquisition, transportation, and customs clearance.

8.26. The transportation costs specified in 8.25 Clause, are determined upon the necessary and minimum transportation costs, which do not include fees for expedition and/or other additional services.

8.27. In the case of finding hidden damages and defects are during repairment works, the Insured shall notify the Insurer about it in written form before the latter's elimination.

8.28. The Insurer does not reimburse for the elimination of hidden damages and defects of a vehicle when they have not been properly coordinated.

8.29. After the repairment works, the vehicle damaged as a result of an accident must be submitted to the Insurer for an inspection before the next insurance accident, otherwise the claims for insurance compensation for damaged parts submitted in the future will not be considered and insurance compensation will not be made for these claims, and in the case of complete destruction, theft or carjacking of the vehicle, the insurance compensation will exclude the damage and depreciation of these components according to the Insurer's calculations.

Compensation amount in case of complete destruction of the insured vehicle and/or additional equipment

8.30. In case of complete destruction of a vehicle and/or additional equipment, if the repairment costs (including the costs subject to compensation under the Contract) equal or exceed 80% of the vehicle's and/or additional equipment's market price, the insurance indemnity is

ապահովագրական հատուցումը իրականացվում է «լրիվ ոչնչացման» պայմաններով:

8.31. Կողմերի համաձայնությամբ տոկոսը, որի դեպքում վնասը դիտվում է որպես «լրիվ ոչնչացում», կարող է փոփոխվել, սակայն մինչև վերանորոգման աշխատանքների սկիզբը:

8.32. «Լրիվ ոչնչացման» պայմանով հայտի կարգավորման որոշում ընդունելու համար Ապահովագրողը SU-ի նախնական զննություն հիման վրա իրականացնում է վերանորոգման նախնական արժեքի գնահատում սեփական հաշվարկների հիման վրա կամ իր կողմից մատնանշած անկախ փորձագետի կողմից կազմված վնասի գնահատման հաշվետվության հիման վրա:

8.33. «Լրիվ ոչնչացման» պայմանով հատուցման դեպքում Ապահովագրողը վնասը հաշվարկում է հիմք ընդունելով ապահովագրական պատահարի օրվա դրությամբ SU-ի շուկայական արժեքը՝ նվազեցնելով SU-ի մնացորդային արժեքը, չհատուցվող գումարը, ինչպես նաև հաշվի առնելով Կանոնների 8.4 և 8.5 կետում նշված պայմանները:

8.34. Ապահովագրողի համաձայնությամբ «Լրիվ ոչնչացման» պայմանով ապահովագրական հատուցումը հնարավոր է իրականացնել առանց SU-ի մնացորդային արժեքը նվազեցնելու, եթե SU-ի մնացորդները Ապահովագրողը փոխանցում է Ապահովագրողին:

8.35. Կանոնների 8.34 կետով սահմանված կարգով ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովագրողի կողմից SU-ի հաշվառումից հանելուց, մաքսազերծելուց (հաշվառումից հանելու և մաքսազերծման ծախսերը կրում է Ապահովագրողը) և Ապահովագրողին նոտարական վավերացմամբ լիազորագրի (Ապահովագրողի կողմից հաստատված բովանդակությամբ) տրամադրումից հետո:

8.36. Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելիս պահում է կատարում պայմանագրով սահմանված ապահովագրավճարի և վճարված ապահովագրավճարի տարբերության չափով:

SU-ի և/կամ LU-ի հափշտակության կամ առևանգման դեպքում հատուցման ծավալը

8.37. Ապահովագրված SU-ի և/կամ LU-ի առևանգման դեպքում ապահովագրական հատուցումը հաշվարկում է ապահովագրական հատուցման

calculated under conditions of complete destruction.

8.31. Before the start of the repairment works, the percentage considered as complete destruction can be changed upon the agreement of the Parties.

8.32. To make a decision on the claim under complete destruction condition, the Insurer evaluates the preliminary cost of the repairment based on its own calculations or the damage assessment report of an independent expert appointed by the Insurer in reference to the preliminary examination of the vehicle.

8.33. In case of an indemnity under complete destruction condition, the Insurer calculates the compensation based on the market price of the vehicle on the day of the insurance accident, while reducing the residual value of the vehicle, the deductible, as well as the stipulations set forth in 8.4 and 8.5 Clauses.

8.34. Upon the Insurer's consent, the insurance indemnity under complete destruction condition may not reduce the residual value of the vehicle, if the Insured transfers the remains to the Insurer.

8.35. Insurance compensation practice prescribed in paragraph 8.33 Clause, is paid after the vehicle's deregistration, customs clearance (de-registration and customs clearance expenses are paid by the Insured) and the provision of a notarized power of attorney to the Insurer (with the Insurer's approved content).

8.36. The Insurer deducts the difference between the insurance premium specified in the Contract and the insurance premium paid, when paying the insurance compensation.

Compensation amount in case of theft or carjacking of the vehicle and/or additional equipment

8.37. In case of a theft of the insured vehicle and/or additional equipment, the Insurer calculates the compensation based on the market price of the vehicle on

որոշման կայացման օրվա դրությամբ ապահովագրված SU-ի շուկայական արժեքի չափով՝ նվազեցնելով պայմանագրով սահմանված չհատուցվող գումարը, ինչպես նաև հաշվի առնելով Կանոնների 8.4 կետով սահմանված պայմանները:

8.38. Ապահովագրված SU-ի հափշտակության դեպքում Ապահովագրողի ընտրությամբ դրամական հատուցման փոխարեն ապահովագրական հատուցումը կարող է իրականացնել համարժեք գույքով՝ տրամադրելով նույն մակնիշի, մոդելի և տարեթվի համարժեք SU:

8.39. Հափշտակված կամ Առևանգված SU-ի դիմաց հատուցումը իրականացվում է հափշտակության փաստով հարուցված քրեական գործի նախաքննության կասեցումից, ավարտից, իսկ քրեական գործը դատարան ուղարկելու դեպքում՝ կայացված դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

8.40. Առանձին դեպքերում Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնությամբ կարող են նախատեսվել 8.39 կետում սահմանված ապահովագրական հատուցման իրականացման ժամկետներից ավելի վաղ ժամկետներ:

8.41. Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա.

8.41.1. եթե SU-ի հափշտակության կամ առևանգման պահին SU-ն համալրված է եղել հակաառևանգման (էլեկտրոնային պահպանման) համակարգով, ապահովագրական հատուցման մեծությունը նվազեցվում է ապահովագրական գումարի 5%-ի չափով,

8.41.2. եթե SU-ի հափշտակության կամ Առևանգման պահին SU-ն համալրված չի եղել հակաառևանգման էլեկտրոնային պահպանման համակարգով կամ այդ համակարգը եղել է անջատված (գտնվել է ոչ աշխատանքային ռեժիմում) կամ շարքից դուրս եկած, ապահովագրական հատուցման մեծությունը նվազեցվում է ապահովագրական գումարի 10%-ի չափով:

8.42. Եթե ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ SU-ի առաջնային զննության ընթացքում SU-ն համալրված չի եղել էլեկտրոնային պահպանման համակարգով, պայմանագրի գործողության ընթացքում նման համակարգ տեղադրելու դեպքում Ապահովադիրը պարտավոր է այդ մասին ծանուցել

the day of the insurance indemnity decision accident, while reducing the deductible, as well as the stipulations set forth in 8.4 Clause.

8.38. In case of theft of the insured vehicle, by the Insurer's decision the Insured can be reimbursed with equivalent property of the same brand, model and year instead of monetary compensation.

8.39. Compensation for theft or carjacking of the vehicle is carried out after the suspension or termination of the preliminary investigation of the criminal case initiated on the fact of theft, and in case of sending the criminal case to court, after the verdict enters into legal force.

8.40. In distinct cases, with the agreement of the Insurer and the Insured, earlier terms for the insurance compensation may be employed than the one set out in 8.39 Clause.

8.41. Unless otherwise is stated in the Contract, then:

8.41.1. if at the time of theft or carjacking of the vehicle, it was equipped with a theft protection system (electronic protection), the insurance compensation is reduced by 5% of the sum insured,

8.41.2. if at the time of theft or hijacking of the vehicle, it was not equipped with an electronic theft protection system or this system was disabled (was in non-working state) or was not working, the insurance compensation is reduced by 10% of the sum insured.

8.42. If the vehicle was not equipped with an electronic protection system during the initial inspection at the time of the Contract conclusion, if installing such system during the term of the Contract, the Insured must notify the Insurer and provide the vehicle for an additional inspection, otherwise the vehicle will be considered not

Ապահովագրողին և SU-ն ներկայացնել լրացուցիչ զննության, հակառակ դեպքում SU-ն կհամարվի էլեկտրոնային պահպանման (հակաառևանգային) համակարգով չհամալրված:

8.43. Կանոնների համաձայն էլեկտրոնային պահպանման համակարգի ներքո հասկացվում է էլեկտրոնային ձայնազդանշանային համակարգը կամ էլեկտրոնային հակաառևանգման համակարգը (այդ թվում՝ էլեկտրոնային իմոբիլայզերը):

8.44. Այն դեպքում, երբ հափշտակված կամ առևանգված SU-ն հայտնաբերվել է մինչև առևանգում ռիսկի գծով կատարված հատուցումը, SU-ին հասցված վնասը դիտարկվում է որպես երրորդ անձանց անօրինական գործողությունների հետևանքով առաջացած և հատուցվում է համապատասխան կարգով:

8.45. Ապահովագրական հատուցումն իրականացնելուց հետո Առևանգված կամ հափշտակված SU-ի հայտնաբերման դեպքում Ապահովագրողը պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումը SU-ի հայտնաբերումից 14 օրվա ընթացքում:

Բաժին Բ-ի դեպքում ապահովագրական հատուցման ծավալը

8.46. Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրությամբ ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը հաստատվելու դեպքում Ապահովագրողը պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի սահմաններում իրականացնում է տուժած անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին հասցված վնասի հատուցում:

8.47. Ապահովագրական հատուցման չափը Ապահովագրողի կողմից որոշվում է պատճառված վնասի փաստը և չափերը հավաստող փաստաթղթերի հիման վրա:

8.48. Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, ապա գույքին վնաս հասցնելու դեպքում ապահովագրական հատուցման գումարի մեջ ներառվում են նաև ՃՏՊ վայրից, որի մեղավորը ոստիկանության արձանագրությամբ ճանաչվել է Ապահովագրողը (Լիազորված վարորդը), երրորդ անձի SU-ի մոտակա

equipped with an electronic protection (anti-theft) system.

8.43. According to the Rules, an electronic protection system means an electronic audio signal system or an electronic anti-theft system (including an electronic immobilizer).

8.44. In case the stolen or carjacked vehicle is found before the compensation under the theft risk, the damage to the vehicle shall be considered resulting from the illegal acts of third parties and shall be compensated accordingly.

8.45. If the stolen or carjacked vehicle is found after the insurance compensation is paid, the Insured is obliged to return the insurance compensation received to the Insurer within 14 days after the discovery of the vehicle.

Compensation amount under Section B

8.46. In case of the confirmation of the insurance accident occurrence under the insurance of liability arising from the use of a motor vehicle, the Insurer shall compensate the damages to the life, health or property of the victims within the sum insured.

8.47. The Insurer determines the insurance compensation amount based on the documents confirming the fact and size of the damages caused.

8.48. Unless otherwise is stated in the Contract, the insurance compensation for the damaged property includes the cost of transportation of the third-party vehicle to a nearby repairment site or temporary storage station from the traffic accident site where the police identified the Insured (Authorized Driver) as the guilty party, if the third-party vehicle damages make its

վերանորոգման կայան կամ ժամանակավոր պահպանման վայր տեղափոխման ողջամիտ ծախսերը, եթե նշված ՏՄ-ն ստացել է այնպիսի վնասներ, որոնց դեպքում դրանց շահագործումն արգելվում է կամ տեխնիկապես անհնար է:

8.49. Ապահովագրական հատուցման չափը որոշելու վերաբերյալ տուժած անձանց հետ փոխադարձ ընդունելի համաձայնության չգալու դեպքում հատուցման ենթակա վնասի չափը սահմանվում է դատական ակտերով:

8.50. Վնասների նվազեցման կամ դատավարության հետ կապված ծախսերը ենթակա են հատուցման, եթե նշված ծախսերը իրականացվել են համաձայն Ապահովագրողի գրավոր ցուցումների կամ նրա գրավոր համաձայնությամբ:

8.51. Յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով ապահովագրական հատուցումը չի կարող գերազանցել ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի մեծությունը:

8.52. Կանխիկ եղանակով ապահովագրական հատուցման իրականացման դեպքում ապահովագրական հատուցման վճարման պահ է համարվում Ապահովագրողի դրամարկից ապահովագրական հատուցման վճարման ամսաթիվը, իսկ անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվից դրամական միջոցների դուրսգրման ամսաթիվը:

8.53. Եթե ապահովագրական պատահարի պահին ապահովագրված ՏՄ-ի գծով առկա է եղել կամ օրենքի պարտադրանքի ուժով պետք է կնքված լիներ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության այլ պայմանագիր, ապա Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցումը միայն նման ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարները գերազանցող վնասների գծով:

8.54. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին գրավոր տեղեկացնել բոլոր գործող ապահովագրության պայմանագրերի մասին՝ նշելով ապահովագրական ընկերությունների անվանումները, ապահովագրված ռիսկերը և ապահովագրական գումարները:

8.55. Եթե տուժած անձանց հասցված վնասը ենթակա է հատուցման ոչ միայն Ապահովագրողի

employment technically impossible or against the law.

8.49. In case of failure to reach a mutual agreement with the injured parties on determining the insurance compensation amount, then it shall be determined by court decisions.

8.50. The damage or litigation costs are subject to reimbursement by the Insurer when incurred in accordance with the Insurer's written instructions or written consent.

8.51. The insurance compensation for each insurance accident cannot exceed the sum insured defined in the Contract.

8.52. The insurance compensation payment date is considered the time of indemnity payment from the Insurer's register for cash transactions and the date of crediting funds from the Insurer's account for non-cash transactions.

8.53. If at the time of the insurance accident, the vehicle had or by law should had had other insurance policy against damages to third-parties arising from the use of motor vehicle, then the Insurer shall pay the insurance compensation only for the excess damages of the amounts insured by such contracts.

8.54. The Insured shall inform the Insurer about their valid insurance contracts, indicating the names of the insurance companies, insured risks and sums insured.

8.55. If the damages caused to the injured parties are subject to compensation not only by the Insured

(Լիազորված վարորդի), այլև այլ անձանց կողմից, որոնք մեղավոր են ապահովագրական պատահարի առաջանալու մեջ, ապա Ապահովագրողը հատուցում է միայն տուժողին հատուցման ենթակա ընդհանուր գումարի և այլ մեղավոր անձանց կողմից վճարման ենթակա գումարի տարբերության չափով:

8.56. Եթե Կանոնների համաձայն՝ հատուցման ենթակա գույքին պատճառված վնասներ են կրել մեկից ավելի անձինք, և այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարը, ապա այդ անձանցից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվում են վնասների ընդհանուր գումարում նրանց գույքին պատճառված վնասների չափերին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի՝ Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

8.57. Եթե Կանոնների համաձայն՝ հատուցման ենթակա անձնական վնասներ են կրել մեկից ավելի անձինք, և այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարը, ապա նրանցից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվում են վնասների ընդհանուր գումարում նրանց պատճառված անձնական վնասների չափերին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

8.58. Սույն Կանոնների համաձայն՝ Ապահովադրի կողմից իր պարտականությունների չկատարումը Ապահովագրողին տալիս է իրավունք մերժելու ապահովագրական հատուցման վճարումը:

8.59. Ապահովագրողն իրավունք ունի երկարաձգել վճարումների ժամկետները, եթե.

- նշանակված է ապահովագրական պատահարի արդյունքում պատճառված վնասի գնահատման լրացուցիչ փորձաքննություն,
- ապահովագրական պատահարի փաստով հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ:

Բաժին Գ-ի դեպքում ապահովագրական հատուցման ծավալը

8.60. Տրանսպորտային միջոցի վարորդի և ուղևորների դժբախտ պատահարներից

(Authorized Driver) but also by other persons responsible for the insurance accident, the Insurer compensates only the difference of the aggregate amount of compensation and the amount to be paid by other parties.

8.56. If more than one person suffered property damages subject to insurance compensation under the Rules and the total compensation amount exceeds the sum insured of one insurance accident, then the insurance indemnity for each of the victims is paid in proportion to the amount of their property damages to the aggregate damage within the limits of the sum insured specified in the Contract.

